# ԳԱՐՈՒՆ

## ԱՄՍԱԳԻՐ

ԷՋԳԱՅԻՆ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԵՒ
ԳԱՂՏԻՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ

1866

ԷՈՒԼԻՆ ՏԱՐԻ

Ամսատետր 5.

Պայծառ արփին արդ բարձրացաւ
Հալման սառին ժամէ արդէն.
Կարմիր վարդին ոստ կակղացաւ,
Ծաղկման ծառին ժամէ արդէն.
Պետրոս վարդապետ Պափանցի.

ՏՓԽԻՍ

1866

## ՊՈՂԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Համառօտ Տեսութիւն Եկեղեցական Պատմութեան։ Եւագ քահանայ Մանդինեանց . . . 257—263
Պետրոս առաքեալ Հռոմ գնացել է թէ ոչ։ Եւագ քահանայ Մանդինեանց. . . . . 269—279
Սորագրութիւն Թիֆլիզու։ Ա.Տ.Յակոբեանց. 280—284
Կեանքի ամենէրջանիկ ժամանակը։ Կարամզին. 285—288
Մանկական աշխարհ։ Կամար Օձնեցի . . 289—304
Ստուաձաշունչ նոր թարգմանութիւն . . 305—311
Մէկ քանի խօսք Հայասանի երգիչների վերայ։ Ն. Երուխանց . . . . . 312—320

# ԳԱՐՈՒՆ

## ԱՄՍԱԳԻՐ

Ազգային Լուսաւորութեան և Դաստիարակութեան։

Ա. տարի — ամսատետր Ե. Մայիս — 1866.

## ՀԱՄԱՌՕՏ ՏԵՍՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ։

### ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻ

Հայաստանի առաջին լուսաւորութիւնը։

Ամենայն ազգերու մէջ, որք ընկալան քրիստոնէական հաւատը անդրանիկն եղաւ Հայոց թագաւոր Արդար Արշակունին, փրկչական 32 թուին։ Նա ունենալով բորոտութիւն եօթն տարի՝ բժշկութեան հնարք չեղաւ, այն ժամանակը խնացաւ Քրիստոսի հրաշագործութիւնները, և նոյն ժամայն հաւատաց, թէ Նա պէտք է լինի Աստուած կամ Որդի Աստուծոյ, ուստի մէկ նամակ գրեց Յիսուսի վերա, և դեսպանները ձեռքով ուղարկեց, որով խնդրում էր գալ և բժշկել զինքը, և նամակն էր այսպէս։

«Արդար Արշամի որդի աշխարքի իշխան, Փրկիչ և բարերար Յիսուսին, որ երևեցար Երուսաղէմացոց աշխարքումը՝ ողջոյն։ Ես լսեցի Քո բժշկութեան համար, որ ա-

նումես առանց գեղի, ինչպէս որ ասումեն, Դու կոյրերուն լոյս ես տալի, կաղերուն գնալ, բորոտներուն սրբումես, դիւահարներուն և երկար ժամանակուայ հիւանդներուն բժշկումես, և մեռելներուն յարութիւն ես տալի: Ես հաւատացել եմ, կամ Դու Աստուած ես երկնքից իջած, կամ Աստուծոյ Որդի, որ էաունք անումես, վասն որոյ աղաչում եմ որ դաս և ինձ բժշկես, մանաւանդ լսեցի թէ Հրէայք տրանջումեն Հեղմէն, և կամենումեն չարչարել Հեգ, շատ լաւ կլինի որ դաս և ի միասին կենանք իմ քաղաքումն»:

Թագաւորը պատէր տաւ դեսպաններուն, որ գոհ մատուցանեն Աստուծոյն Երուսաղէմի տաճարումը, և եթէ Յիսուս չկամենայ գալ՝ նկարեն Նորա պատկերը, որ գոնէ նըրամով իր փափագն առնու: Դեսպանները գնացին Հրէաստան այն օրը, որ Հրիստոս մտնումէր Երուսաղէմ հանդիսով, և էին կարողանում ժողովրդի բազմութեան պատճառաւ մօտ գնալ, ուստի Փիլիպպոսին ասացին թէ կամենումենք Յիսուսին տեսնել, Փիլիպպոս ասաց Անդրէասին, և երկուսը միատեղ ասացին Յիսուսին, և Յիսուս ստանալով նամակը ասաց՝ «Հասաւ ժամը, որ Որդի մարդուն փառաւորուի» (Յովհ. ԺԲ. 20—23):

Յիսուս, որ արդէն պիտի կատարէր մարդկային ազգի փրկութեան գործը՝ չդնաց, այլ Թովմաս առաքեալն դրեց Յիսուսի հրամանով Երդարի թղթի պատասխանը, թէ՝ «երանի նրան ով ինձ կհաւատայ, որ ինձ տեսած չլինի, որովհետև իմ համար գրուած է, թէ ինձ տեսնողներն չեն հաւատալ, և չտեսնողներն՝ կհաւատան ու կապրին: Իսկ այն բանի համար, որ գրել էիր, թէ Ես դամ քեզ մօտ. դեռ Ես պիտի կատարեմ այս օրերումն այն ամենայն բանը, որի համար ուղարկուած եմ, և երբ կկատարեմ և կերթամ Իմ ուղարկողի մօտ, այն ժամանակ Իմ աշակերտներուց մէկին կուղարկեմ, որ քեզ բժշկէ»:

Դեսպանները տեսնելով թէ Յիսուս չէ կամենում գնալ

կամեցան թագաւորի երկրորդ հրամանը կատարել. նրանցմէն մէկը Անանէ անունով էր պատկերահան, և սկսեց նկարել Քրիստոսի պատկերը, բայց չկարաց։ Յիսուս իմանալով նորա սրտի ցանկութիւնը վերառաւ մի դաստառակ, և դրաւ իւր սուրբ պատկերի վերա, և այն բոպէին նկարուեցաւ նորա դէմքն, ու տուաւ Անանէին նամակի հետ։ Ասանալով դեսպանները անցին պարգևները—թուղթը և անձեռագործ պատկերը մեծ ուրախութեամբ յետ դարձան Եդեսիա և տուին թագաւորին։ Աբգար ջերմեռանդ հաւատով ընկաւ Դաստառակի առջև երեսի վերա ու երկրպագեց փափագով, և զգաց իրա ցաւերին թեթեւութիւն. կարդաց նոյնպէս նամակը, և օրէ ցօր սպասում էր խոստմունքի կատարելուն։

Քրիստոսի համբարձմանից յետոյ Թովմաս առաքեալը ուղարկեց իւր եղբայր Թադէոսին Հայաստան, ինչպէս որ Քրիստոս հրամայել էր։ Նա եկաւ Հրէայ Տուբիա իշխանի տունը, որ Բադրատունեաց ցեղից էր. բերելով իրա հետ և կողմունքս գեղարդը արաւ շատ հրաշքներ, մկրտեց Տուբիային և ուրիշներուն, որի համբաւը հասնելով Աբգարին կանչեց Թադէոսին, և սա պատմելով Քրիստոսի հրաշափառ տնօրէնութիւնները, դրաւ Թագաւորի վերա ձեռքը ու բժշկեց, նոյնպէս և շատ ցաւագարներուն, որք տեսնելով այս հրաշքները մկրտուեցան Թագաւորը և բոլոր քաղաքը։ Այնուհետև փակեցան կռատունները, և Քրիստոսի Խաչը կանգնեցաւ ամեն տեղ։ Իսկ սուրբ Դաստառակը դրաւ քաղաքի դռան գլխին, որ մոնոզները երկրպագութիւն տան. շինեց սուրբ Աստուածածնայ անունով եկեղեցի, և ձեռնադրեց Եդեսիոյ համար եպիսկոպոս Թագաւորի խոյր շինողին, որի անունն էր Ադէ։ Եւ ինքն Թագաւորական հրովարտակով գնաց Շաւարշան (Արտազ) գաւառը Աբգարի քրոջ որդի Սանատրուկի մօտ, որ Հայոց աշխարհի և գօրքի իշխան ու հրամանատար էր, և սկսաւ քարոզել Աւետարանը, հրաշքներ առնել, և շատերը հաւատալով մկրտուեցան, որոց հետ և Սա-

նաստրուկ, ու սորա աղջիկ Սանդուխտը միանդամայն աշա-
կերտեցաւ Բռաքեալին, ուր ձեռնադրեց եպիսկոպոս իւր աշ-
շակերտ Զաքարիային, և ինքն իրը 40 թուին գնաց դէպ ի
վերին Հայաստան, Սիւնեաց և Աղուանից աշխարքը քարո-
զելու և շատերուն մկրտեց: Յետոյ գնաց դէպ ի Փոքր Հա-
յաստան Կապադովկացոց աշխարքը Կեսարիա քաղաքը, որ
թէպէտ Յունաց իշխանութեան ներքոյ էր, բայց բնակիչներ-
ու մեծ մասը Հայք էին, տարածեց այն տեղ սուրբ հաւա-
տը, ձեռնադրեց նոցա համար եպիսկոպոս իւր աշակերտ Թէո-
փիլոս Անախորացուն (43 թուին) և այս տեղից գնալով դէպ ի
Միջագետք (49 թ.) պատահեցան ճանապարհին հինգ հոգի,
որք էին Հռոմայեցուցմէն ուղարկուած գնդապետներ Սանտա-
բուկի մօտ որոց գլխաւորի անունն էր Խրիսպ, այսինքն և
Ասկի: Սրանք Թադէոսի քարոզութեամբ մկրտեցան և նը-
թանց գլխաւորին ձեռնադրեց քահանայ, որի անունով կոչե-
ցան Ասկեանք, և շրջելով Հայաստան քարոզում էին Քրի-
սոսին:

## Բարդուղիմէոս Առաքեալ:

Բարդուղիմէոս տասներկուսից մէկը Թովմասի հետ գը-
նացին Հայաստանի վրայօք դէպ ի արևելք Հնդկաց աշ-
խարքը, և այն տեղից մինակ վերադարձաւ Եղուսաղէմ, և
չգտաւ Աստուածածնին կենդանի, որի համար շատ տրամե-
ցաւ և ինդրեց բացանել նորա տապանը, բայց մարմինը չը-
գտան, որովհետև վերափոխուել էր երկինքը, և նրան մեկ-
թաղելու համար տուին Աստուածածնայ պատկերը, զոր Յով-
հաննէս Աւետարանիչը փորագրել էր փայտի վերա, և սուրբ
Աղան օրհնել էր: Բարդուղիմէոս վերառնելով Տիրամօր պատ-
կերը եկաւ կրկին Հայաստան 65 թուին, և նրանով շատ ըմ-
քանչելիք արաւ, բայց տեսնելով Սանատրուկի անկոտրում
սիրաը՝ անցկացաւ դէպ ի Պարսկաստան, ուր բնակիչքը չը-
ընդունեցին նորա քարոզութիւնը, փոխանակ որոյ յետ եկաւ Հայաս-

տանի Աղբակայ, Նախիջևանայ և Գողթան գաւառները իւր ութն աշակերտներով որ մոգութիւնից գարձրել էր, և նոցա գործակցութեամբ քարոզում էր, և շատերուն մկրտում։ Յետոյ ձեռնադրեց եպիսկոպոս իւր աշակերտներուց մէկին Սումնի անունով Գողթան գաւառի Աղուլիս գիւղաքաղաքում, և ինքն դնաց դէպ ի Արտաշատու բլուրը, ուր տեսութիւն անելով Յուդայ Թադէոս կամ Ղէբէոս Առաքեալի հետ, գնաց Ներայ և Զարեւանդայ գաւառները, և շատերուն շինելով քրիստոնեայ անցկացաւ Ընձևացեաց կողմը, լուսաւորեց մեծ բազմութիւն, հալածեց դևերուն, մանաւանդ Դարբնայ քար տաւած տեղից, ուր Անահիտի կամ Աֆրոդիտէ շատաւածուհու կուռքը կար, և լեռան գլխին մէկ խաչ կանգնեցրեց, ու յետոյ Տիգրիս գետի ափում Կանդարի մօտ շինեց սուրբ Աստուածածնայ անունով եկեղեցի, և դրաւ այն տեղ Տիրամօր հրաշագործ պատկերը, զոր անուանեց Հոգեաց վանք, և ժողովեց այն տեղ կուսանք։ Այնա գնաց Հերեանոս (Ուրբանոս) քաղաքը և դարձրեց Սանատրուկի քոյր Ոգոհէին և նորա հաղարապետ Տերենտիոսին և ուրիշ շատերուն։ Այս պատճառաւ Սանատրուկ քերթել տուաւ Բարդուղիմէոսին և խաչ հանեց Բարմ կամ Աղբակ ասացեալ տեղումը Նուլամերկ գաւառումը Վանայ փաշայութեան 68 թուին, և թաղեցին այն տեղ։ Որա աջը արծաթի պահարանի մէջ կայ սուրբ Էջմիածնումը։

Յուդայ Թադէոս կամ Ղէբէոս առաքեալ, սա քարոզելուց յետոյ գանապան տեղեր եկաւ Հայաստան, հաստատուում էր հաւատացեալներուն հաւաքի մէջ, շինեց եկեղեցիք, ձեռնադրեց քահանայք, և տեսութիւն անելով Բարդուղիմէոսի հետ Արտաշատի բլրի վերա անցկացաւ դէպ ի Պարսկաստան և շատերուն դարձրեց դէպ ի քրիստոնէութիւն, նահատակեցաւ Զարեւանդայ Որմի քաղաքումը 69 թուին, ուր և թաղեցին։

## Քրիստոնէից հալածումները։

Աբգարը ոչ թէ միայն աշխատում էր տարածել քրիստոնէութիւնը Հայաստան աշխարքում, այլ և թղթեր գրեց և ուրիշ թագաւորներու վերա, ինչպէս Հռոմայ Տիբերիոս կայսերը, Ներսեհ Ասորեստանի թագաւորին և Պարսից Արտաշէսին, յորդորելով նրանց դէպ ի քրիստոնէութիւն, բայց նորա մեռնելուց յետոյ 36 թուին նստեցաւ նորա Անանէ որդին թագաւոր։ Սա թողեց քրիստոնէութիւնը, և բաց արաւ կուռքերի տաճարները։ Այն ժամանակ Դդէ եպիսկոպոսը, ոչ թէ միայն Եդեսիայ քաղաքումն էր քարոզում, այլ և Ասորոց, Մարաց և Պարսից սահմանակից տեղերում։ Անանէ իմանալով սորա գործքերը, պատճառ էր որոնում սպանելու՝ ուստի ուղարկեց մարդ, որ իրա համար խոյր շինէ, ինչպէս շինում էր Աբգարի համար, բայց նա պատասխանեց, թէ Քրիստոսի ուրացողի համար իմ ձեռքերս խոյր չեն կարող շինել, վասն որոյ նահատակել տուաւ Եդդէին, և ինքն էլ կրեց պատիժը, որ նոր պալատի շինութեան մարմարէ սիւնը կանգնեցնելու ժամանակ յանկարծ դուրս պրծաւ բանողներու ձեռքից, և ընկաւ Անանէի վերա ու մեռաւ 39 թուին։

Սանատրուկ, որ Աբգարի մահուանից յետոյ առանձին թագաւորեց Հաւարշանումը, կամենում էր տիրել և ստորին Հայաստանին, վասն որոյ մեծ զօրք ժողովելով գնաց Անանէի վերա, այնպիսի պատրաստութեան ժամանակ իմանալով նորա մահուան լուրը, ուրախացաւ շատ և շտապով գնաց Միջագետք, իսկ Եդեսիայի բնակիչները դեսպան ուղարկեցին Սանատրուկի մօտ, պայման խնդրելով, թէ նոքա կատն քաղաքը և թագաւորական գանձը, եթէ չի դիպչել քրիստոնէական հաւատին։ Թէպէտ անօրէն Սանատրուկը խոստացաւ երդմունքով կատարել նոցա պայմանը, բայց քաղաքը առնելուց յետոյ՝ հակառակ իւր խոստմունքին մեծ հալածանք վերկացրեց քրիստոնէից վերա, նահատակեց Թադէոս առա-

քեալին Շաւարշան քաղաքումը 51 թւին, նոյնպէս իւր դուստր Սանդուխտին, որք թաղուած են Շաւարշան գաւառի Սանտարուկ կոչուած դաշտումը, և հինգերրորդ դարուսկզբումը Կիրակոս ճգնաւորի ձեռքով գտնուեցաւ, և շինուեցաւ գերեզմանի վերա եկեղեցի ,,Թադէոս առաքեալի վանք'' անունով։ Սորա գլուխն և աջն արծաթի պահարանի մէջ կայ սուրբ Էջմիածնումը, նոյնպէս և Գրիգորոսի կողմունքն գեղարդը։

Երկրորդ դարումը, Արտաշէս Բ. թագաւորութեան ժամանակը սկսաւ հալածումն, և նահատակեցան Ասիանք։ Սոքա դարձրին 92 թւին դէպ ի քրիստոնէութիւն Արտաշէս թագաւորի կին Սաթինկի ազգականներուց տասն և ութն հոգի, որք Լէգգիք (Ալանք) էին, և մկրտեցին Եփրատ գետի ակներումը, ու նոցա գլխաւորն՝ որի անունն էր Բահագրաս, կոչեցաւ Սուքիաս, և գնացին Ոսկեանց հետ անապատը ճգնելու։ Յետոյ թագաւորի որդի Արտաւազդը իւր եղբայրներով գնաց Ծաղկէոյ լեառը, և պատահելով Սուքիասեանց յորդորեց ընդունել հեթանոսութիւնը, և Ոսկեանց հրամայեց սաստիկ պատժով, որ յորդորեն թողնել քրիստոնէութիւնը, սակայն հակառակ պատասխան ընկալաւ թէ, ,,իրանց օգուտը իրանք ընտրեն''։ Որի համար Արտաւազդ մորթել տաւ Ոսկեանց 107 թւին, և էին հինգ հոգի, իսկ Սուքիասեանց ձեռք չտաւ, պատճառ որ իւր մօր ազգականներն էին։

Իսկ Սուքիասեանք, որք ճգնում էին Ծաղկէոյ լեռան մէջ, և խոտով էին կերակրվում, գնացին ուրիշ անծանօթ տեղ Սուկաւկամ Սուկաւէտ լեառը, որ կոչվում է Քոսապաղ Բաղրեանդ գաւառումը; և այնչափ մեծացան նոցա մտքերը, որ մարմինները ծածկեցին և կոչեցան Քոշք, (վերի այծ)։ Սրանք էլ նահատակեցան Ալանաց Բառլահա զօրավարից 130 թւին։

Լատինաց Յայսմաւուրքումը Յունիսի 22 գրած է, թէ

Անդրիանոս կայսեր ժամանակ Հայոց գլխաւորներու գունդը իրը տասն հազար նահատակեալներն Արարատի լեռան վերա։

Երրորդ դարումը հալածանք վերկացրեց Խոսրով Ա. Թագաւոր (Տրդատի հայրը) շատերուն նահատակեց, և Գիոկղեսիանոսի ժամանակ նահատակեցան Սեբաստիայի և Նասէնի քաղաքներում Աւստառատիոսեան հինգ վկայք, որոց անունները էին Աւստառատիոս, Օգսենտիոս, Աւդիսէոս, Ովրեսատէս և Մարգարիոս. սրանցը ոտնում է Հայոց եկեղեցին։

Այս դարերումը Աբգարի մահուանից յետոյ քրիստոնէութիւնը էր հալածանքի ներքոյ, և կուսապաշտ թագաւորներու երկիրներից ծածուկ էր պաշտվում լեռներում, ձորերում և այլերում։

## Անապատական կեանք և կուսանոց։

Թէպէտ մեր ազգի պատմութիւնը մէկ լրիւ տեղեկութիւն չէ տալի առաջին երեք դարումը անապատական կեանքի և կուսանոցի սահմանելու համար, բայց հետքը գտնում ենք նոցա գոյութեան համար, որ ամեն ազգերուց առաջ Հայաստանումը սահմանուեցան մենաստանները։

Ոսկեանք ընդունելով Թադէոս առաքեալից քրիստոնէական հաւատը, Թէպէտ և քարոզումէին, բայց ճգնաւորական կեանք էին վարում Ծաղկէոյ լեռնումը բանջարեղէն ուտելով։ Սրանց հետևեցան Սուքիասեանք, որ ուելի խոր տեղ ընտրելով հեռացան Սուկաւէտ լեառը և խստակրօն ճգնութիւնով անցկէին կացնում իրանց օրերը խոտեղէն միայն ճաշակելով։

Խարդուղիմէոս շինելով Տիզրիս գետի ափնումը Կանդուարի մօտ Աստուածածնայ անունով եկեղեցի, ուր դրաւ նորա պատկերը՝ որ Երուսաղէմից բերել էր, կոչեց Հոգեաց վանք, ուր ժողովեց կոյսեր, և դրուխ կարգեց նոցա վերա Յուսիկ իշխանի քոյր Մարիամին։

Այս համառօտ պատմութիւնը յայտնի ապացուցանումէ

որ Հայաստանի մէջ քրիստոնէութեան տարածելու սկզբից սահմանուեցան արականաց և իգականաց մենաստաններ, և շարունակ հասաւ մինչև չորրորդ դարը։

Եպիսկոպոսներու յաջորդութիւնը։

Թադէոս և Բարդուղիմէոս առաջին լուսաւորիչներու յաջորդութիւնը Հայաստան աշխարհումը հասաւ մինչև սուրբ Գրիգոր լուսաւորիչը։ Թէպէտ նոցա շարունակութիւնը չէ պահել պատմութիւնն, բայց գտնվումեն և յիշատակուած զանազան անցքերու մէջ. որք են՝

## ԱՌԱՋԻՆ ԴԱՐ.

Եղիշէ Առաքեալ, էր Քրիստոսի եօթանասուն աշակերտներուց մէկը, եկաւ Թադէոսի հետ Հայաստան, և նորա նահատակութիւնից յետոյ գնաց Երուսաղէմ, ձեռնադրուեցաւ Յակոբոս Տեառն եղբօրմէն եպիսկոպոս, և վերադարձաւ Հայոց աշխարքը 52 թուին, մտաւ Մագքթաց (Քիւրեցիք) երկիրը և սկիզբն արաւ քարոզելու Ղողայ (Ղորայ), և շատ տեղեր տարածեց քրիստոնէութիւնը։ Յետոյ գնաց Ուտի գաւառը Սահառ քաղաքը և այն տեղից Գիս կամ Քիս, ուր շինումէ եկեղեցի և մատուցանումէ սուրբ պատարագը և ամենքին մկրտումէ, և ապա Ջերգունի (Ջարաղան) գաւառը՝ որ հեթանոսներու զոհարան էր, քարկոծուեցաւ 70 թուին, և գցեցին մէկ գրի մէջ, որ կոչվում էր Հոմէնք (Հոմէն), զոր յետոյ գտան և տարան Ջրվեշտիկ վանքը։

Ստաթէոս Առաքեալ էր Քրիստոսի եօթանասուն աշակերտներուց մէկը։ Սա ձեռնադրուեցաւ Թադէոսից եպիսկոպոս, մկրտեց շատերուն և 70 թուին նահատակուեցաւ Միւնեաց աշխարքումը Հաղբ գիւղաքաղաքումը, որի վերա շինուեցաւ եկեղեցի և կոչվումէ Տաթևու վանք։

Ադդէ եպիսկոպոս Եդեսիոյ նահատակեալ 39 թուին։

Ջաքարիա եպիսկոպոս Արտազ գաւառի նահատակեալ Երուանդ Ի. թագաւորիմէն 70 թուին։

Թէոփիլոս Անտիոքացի Կեսարիու Կապադովկացոց եպիսկոպոս։ Սա աշակերտեցաւ Թադէոսին և նրա հետ շըրջումէր քարոզութիւնով, և յետոյ ձեռնադրեցաւ Կեսարիու հօտի վերա եպիսկոպոս։ Սա նախագահ գտնուեցաւ Պաղեստինու ժողովքումը ըստ Եւսեբեայ, և խաղաղութիւնով մեռաւ 70 թուին։

Զեմենտոս Բ. եպիսկոպոս Հրոմայեցու, նահատակուեցաւ Երուանդ թագաւորի եղբայր Երուազ քրմապետից 79-ին։

Կումսի եպիսկոպոս Գողթան գաւառի, մեռաւ խաղաղութիւնով 90 թուին։

Տուբիա Գ. եպիսկոպոս Եդեսիոյ։ Սա էր Բագրատունեաց ցեղից, որի մօտ իջևանեցաւ Թադէոս Եդեսիայ եկած ժամանակը, և նահատակուեցաւ 94 թուին։

## ԵՐԿՐՈՐԴ ԴԻԷՐ.

Բաբիլաս եպիսկոպոս յաջորդ և ընկեր Կումսեայ, վախճանեցաւ 120 թուին։

Բարսումա եպիսկոպոս Եդեսիոյ մեռաւ 120 թուին։ Այս եպիսկոպոսներու յաջորդութիւնն ոչ գտնուրեց մինչև Գրիգոր լուսաւորիչը, թէպէտ և չունինք անունները լրիւ, ինչպէս գրումէ Հայր Աւգերեանը։

Մխիթար վանահայր (գուցէ եպիսկոպոս) Միւնեաց սուրբ Ստեփանոսի վանից, որ կոչեցաւ Թանահատի վանք, ըստ որում ուսիք օրերը միաբանութիւնը միայն Թան էին ուտումէ, ինչպէս գրումէ Ստեփանոս Օրբէլ, և վախճանեցաւ 170 թուին։

Զոթիկոս եպիսկոպոս Փոքր Հայաստանի Կոմանի քաղաքի։ Սա բանով և գրով ընդդէմ կացաւ Մոնտանոս հերձուածողին ըստ Եւսեբիոսի, և նահատակեցաւ 190 թուին։

Կեսարիու եպիսկոպոսն, որ մկրտեց Եպսիքոսին Անդրիանոս կայսեր օրով, բայց թէ ի՞նչէ նորա անունը՝ չէ յիշում պատմութիւնը, և այն տեղի յաջորդութիւնը սկսած

Թէոփիլոսիմէն հասաւ մինչև Ղևոնդ, որիմէն ձեռնադրուեցաւ մեր երկրորդ լուսաւորիչը։

## ԵՐՐՈՐԴ ԴԷՐ.

Աղէքսանդր եպիսկոպոս Կեսարիու Կապադովկացոց։ Սա փոքր ժամանակ հովուելով Կեսարիու հօտը. գնաց Երուսաղէմ ըստ յայտնութեան Տեառն Նարկիսոս եպիսկոպոսի ժամանակ, որին լինելու մէջ օգնական եկեղեցոյ կառավարութեան մէջ, և վախճանեցաւ 230 թուին։

Փիրմելիանոս եպիսկոպոս էր աշակերտ Որոգինէսի, ինքն աստուածային շնորհքով լեցեալ և ուղղափառ վարդապետ, կարգեցաւ եպիսկոպոս Կեսարիու 251 թուին, բերեց իւր հետ Յովհաննէս Մկրտչի մասունքը։ Սորա վերա շատ գովութեամբ է խօսում Եւսեբիոս պատմիչը։ Սա գտնուեցաւ երկու անգամ ժողովքի մէջ, որ գումարուեցաւ Պաւղոս Սամոսատցի հերձուածողի պատճառով։ Եւ վախճանեցաւ 272 թուին։

Եկակիոս եպիսկոպոս Տիգրանակերտի (Ամիդ), էր համարձակ և անահ քարոզիչ, վախճանեցաւ 280 թուին։

Մեհրուժան եպիսկոպոս Մեծ Հայոց։ Սորա վերա դրեց Աղէքսանդրիու Դիոնէսիոս եպիսկոպոսը զիր։ Սա նահատակուեցաւ Խոսրով թագաւորիմէն 157 թուին։

Երքեղայոս եպիսկոպոս Հայոց Միջագետքի նահատակեցաւ 280 թուին։

Սեբաստիոյ եպիսկոպոսն, որ ձեռնադրեց Աթանագինէսին քահանայ, թէ ի՞նչ էր նորա անունը, չէ յիշում պատմիչը։

Աղենէոս եպիսկոպոս Կեսարիու, նահատակեցաւ 287-ին.

Պետրոս եպիսկոպոս Սեբաստիոյ, նահատակեալ նոյն քաղաքումը, յիշվում է միայն սուրբ Աթանագինէսի վարքագրութեան մէջ։

Աթանագինէս եպիսկոպոս Սեբաստիոյ աներորդի սուրբ Լուսաւորչին։ Սրան իրա շնորհալի քարոզութեան համար

ձեռնադրեց քահանայ Սեբաստիոյ եպիսկոպոսը, որի անունը չէ յայտնի։ Եւ երբ որ բարբարոսները ասպատակեցին այն քաղաքը և շատ ժողովուրդ գերի տարան, չկարաց դիմանալ Մթանագինէս իւր հօտի տառապանքներուն, այլ ինչպէս քաջ հովիւ գնաց նոցա հետ բարբարոսներու աշխարքը, որ մէկ կերպով կարողանայ ազատել ժողովրդին, և ճանապարհին ազատեց հրաշքով մէկ տղային վիշապից, սպանելով գազանին։ այս որ իմացաւ այն տեղի եպիսկոպոսը ձեռնադրեց Մթանագինէսին եպիսկոպոս, բայց յետ գալուց յետոյ իւր հայրենիքը ազատած գերիներու հետ, ամենևին չյայտնեց իւր եպիսկոպոսութիւնը, այլ ինչպէս Հոր եպիսկոպոս կառավարումէր հօտը 20 տարի, և յետոյ Գրիգորոս դատաւորը այրել տաւ նրան 285 կամ 290 թուին։

Ալասիոս եպիսկոպոս Սեբաստիոյ։ Սա ևս իւր քարոզութեան համար գլխատեցաւ երկու հաւատացեալ մանուկներու հետ 315 թուին։

Կոն, Կոնոս կամ Կոդնատիոս եպիսկոպոս Էդեսիոյ որի անունը միայն տեսնումենք Յայսմաւուրքումը Բիբաս սարկաւագի վարքումը, և Էջմիածնայ գրքատան Ձառընտիրների մէջ։ Սա նահատակեցաւ Վիսկղեսիանոսի օրով 291 կամ 295 թուին։

Ղեոնդիոս եպիսկոպոսն Սեսարիոյ, որ ձեռնադրեց մեր սուրբ Գրիգոր Լուսաւորչուն։

---

## ԿՐԻՏԻԿԱՆ ՔՆՆԱԼԻԹԻՆ

### Պետրոսը Հռոմ գնացե՞լ է, թէ ո՛չ։

Ա. Պապականներն՝ որ այնչափ վստահութիւն ունին Պետրոսի վերա, թէ նա է նոցա քրիստոնէութեան հիմնադիրը, տեսնենք այժմ թէ նա գնացե՞լ է Հռոմ, թէ ո՛չ։

Պետրոսի Հռոմ գնալը, ոչ այլ ինչ է՝ եթէ ոչ մարդկային կեղծեալ աւանդութիւն և անհիմն զրոյց։ Առաջին, երկրորդ և երրորդ դարու մէջ բոլորովին անծանօթ էր այդ և ոչ ոք չէ լսած, և ոչ մէկ եկեղեցական պատմագիր չունի յիշատակած, և առաջին անգամն ենք տեսնում չորրորդ դարումը Եւսեբիոսի եկեղեցական պատմութեան մէջ, թէպէտ անհաստատ խօսքերով (գր. է. թղթ. 32, 34։ գր։ գ. թղթ. 4, 24, 30, 36 և այլն), որ չունի գրաւոր հիմն՝ այլ ականջալուր կարծիքներով, թէ ,,Ասանդեալ լինի՝ թէ Պօղոս 'ի Հռոմ գլխատեալ իցէ՝ իսկ Պետրոս 'ի խաչ ելեալ իցէ՝ առ թագաւորութեամբ Ներոնի (Ներոնի)''։ Կրկին ասում է ,,Իսկ Պետրոս երևի թէ քարոզեալ իցէ 'ի Պոնտոս, 'ի Գաղատիայ... որ և 'ի վախճանի կենացն 'ի Հռոմ եկեալ գլխիվայր խաչեալ է'' բայց քրոնիկոնի մէջ իւր այս գրուածքներին հակառակ է խօսում թէ ,,Պետրոս առաքեալ յետ հիմնելոյ զեկեղեցին Անտիոքայ՝ 'ի Հռոմ առաքի ուր գամն 25 քարոզելով գաւառատարանն Ճոայ եպիսկոպոս այնր քաղաքի''։ Եւսեբիոսի այս բանը յայտնի հակառակ է վերև գրուածին ,,'ի վախճանի կենացն 'ի Հռոմ եկեալ''։ Եւ այն բանի վերա գամն 25 այսպէս է գրում գիտնականն Աքալեճէր թէ'' (այս խօսքերը) աւելացրել է Հերոնիմոս, և նա է կրկնել եկեղեցական մատենագիրներու ցու-

ցակի մէջ։ Յունական ձեռագիրները չունին այդ խօսքերը։ Քրիստոսի համբարձմանից մինչև այն ժամանակ, որ Պետրոսին բանտը դնել տաւ Հերովդէս Ագրիպպայ . . . միշտ Պաղեստին կամ Ասորեստան էր շրջում Պետրոս, Հերովդէս Աղրիպպայ մեռաւ Կղոդոսի չորրորդ տարին։ Ուրեմն ի՞նչպէս գնաց Պետրոս Հռոմ Կղոդոսի երկրորդ տարումը, ի՞նչպէս մնաց Հռոմումը քսան և հինգ տարի և այլն"։ Եւ այժմ ամենայն կրիտիկոսներ ասում են, թէ Հերոնիմոս թարգմանելով Եւսեբիոսի պատմութիւնը Յոյն լեզուից շատ բան է աւելացրել իրմէն, մանաւանդ երբ պատմութիւնն էր Հռոմայ մասին, զոր և Հայրն Մկրտիչ խոստովանում է լատինական յառաջաբանութեան մէջ Եւսեբիոսի դրուածքների համար, թէպէտ և ոչ մէկ բառ չէ ասում ծանօթութեան մէջ Պետրոսի Հռոմ գնալու վերա։

Բ. Վերջին դարերու շատ գիտնական վարդապետներ, մանաւանդ Փրեդերիք Ավանհէմ յայտնի ցոյց են տալիս, թէ Պետրոս ամենևին չէ գնացել Հռոմ, և ոչ թէ քսանուհինգ տարի հովուել է այն վիճակը, և այս բանի հաստատութեան համար բերում են զօրաւոր փաստեր, նախ՝ այն, որ չէ թէ միայն Ղուկաս չէ յիշում Գործք առաքելոցի մէջ այս անցքը, և ոչ ինքն Պետրոս և միւս առաքեալքը և ոչ առաքելոց աշակերտները առաջին դարու, որպիսի են Կղեմէս Հռոմէացի, Իգնատիոս, Պողիկարպոս, Բառնաբաս, Հերմէս և այլն, և ոչ էլ երկրորդ դարու պատմիչները, որպիսի են Պապիաս, Կուատրատոս, Երիստիդէս, Յուստինոս վկայ, Իրինէոս, Պողիկարպոս, Թէոփիլոս, Մելիտոս, Եպոդենաբ, Դիոնեսիոս, Անկեսիպպոս, Դատիանոս, Բրերկիոս, Մթենագորաս, Կղեմէս Աղեքսանդրացի, Պողիկրատէս և ուրիշներն էլ շատ բան են խօսում այս առարկայի վերա։ Եւ ի՞նչպէս կարելի է հաստատել՝ որ այսպիսի երևելի դիպուածքը եթէ եղած լինի նոքա զանց լինին սրած յիշելու, ապա ուրեմն չէ եղել Պետրոս Հռոմումը։ Երկրորդ այն՝ զի ոչ միայն չէ յայտնի

Պետրոսի Հռոմ գնալու ժամանակը՝ այլև ճիշդ ժամանակագրութեան հաշուով չէ կարելի հաստատել, որ նա քան և հինգ տարի մնացած լինի Հռոմում, որպէս թէ Պետրոս մինչև 52 թիւը, որ ժամանակ եղաւ առաքելոց ժողովը՝ նա Երուսաղէմումն էր և տարեթիւն էլ ուղիղ է, իսկ նորա նահատակութիւնը 66 թիւն, ապա ինչպէս գնաց նա 40 կամ 43 թիւն Հռոմ ու մնաց այն տեղ կամ յետ եկաւ, թողնենք այն որ ասում են էլի, թէ Լօթն տարի կառավարել է Անտիոքայ եկեղեցին, այս ամենքը սուտ և անհաստատ կարծիքներ են, որոց համար երկար է գրում Սփանհէմ շատ փաստերով (Պատ. ա. եր. 585 և այլն)։

Գ. Ասենք թէ ստոյգ է Պետրոսի Հռոմ գնալը, բայց սրբոյն ստուգութիւն է այդ՝ մարդկային և պատմական, հիմնուած ոչ ժամանակակիցներու, և ոչ ականատեսներու վկայութեանց վերա, այլ երեք դար յետոյ վկաներու այն էլ կարկտած բաներով, թէ Պետրոս իւր կեանքի վերջին օրերումը գնաց Հռոմ և ոչ թէ քսան և հինգ տարի առաջնորդութիւն արաւ Հռոմումը, պատճառը որ հակառակ է առաքելական պաշտօնին, ինչպէս Ոսկեբերանը ճշմարտութեամբ սովորացնում է (Մեկ. Մատ. Ն՛ատ ժԹ)։ ,,Թէ առաքեալը՝ էտոով է զանազանում եպիսկոպոսին, որ առաքեալքը չէին կարող մնալ մանաւոր տեղ կամ քաղաքում երկար տարիներով, այլ Քրիստոսի հրամանով պարտաւորուած էին պտտել բոլոր աշխարքը քարոզել աւետարանը և հաստատել եկեղեցիք ամենայն տեղ, և հակառակ սրան եպիսկոպոսներն կապած են մէկ վիճակի հետ՝ և չեն կարող խառնուիլ ուրիշի վիճակին»։ Եւ այսպէս Պետրոս չէր կարող քսան և հինգ տարի ինչպէս հասարակ եպիսկոպոս հաստատել իւր աթոռը Հռոմում. և այս հաստատումէ այն բանը՝ որ Պետրոս իրա թղթերի մէջ չէ անուանում. ղենքն Հռոմայ եպիսկոպոս, այլ միշտ առաքեալ Քրիստոսի, մանաւանդ պատմիչները Հռոմայ եպիսկոպոսաց կարգը սկսում են Լինոսիէն,

որին կոչումն առաջին եպիսկոպոս, ըստ այսմ նա ինքն Եւսեբիոս քրոնիկոնումը (Հայ և Լատին տպած Վենետիկ 1818 թուին) Կղեմէնտոսին ասումէ երկրորդ եպիսկոպոս և Լինոսին առաջին եպիսկոպոս, զոր և հաստատումէ տպագրող Հայր Մկրտիչը Լատին Ծանօթութեան մէջը (երես 354)։ Այսպէս են ասում Հերոնիմոս, Եպիփան, (Հեր. 27) և ուրիշ պատմիչները, ուրեմն սուտ է ասելը, թէ Պետրոս է Հռոմայ առաջին եպիսկոպոս։

Դ. Շատ զանազան են կարծիքները Պետրոսի մահուան համար, որ Աթանաս առաջին ջատագովութեան գրքումը ուրիշ տեսակ է պատմում, Եւսեբիոս ջոկ տեսակ է պատմում, Որոգինէս և Հերոնիմոս ջոկ, նոյնպէս ոմանք ասումեն թէ Պետրոս և Պօղոս միասին քարոզումէին Հռոմում. Պետրոս Հրէից և Պօղոս հեթանոսներուն, և սոցա մահն էլ չունի ստուգութիւն, ոմանք ասումեն թէ մէկ տարում և մէկ օրում նահատակուած են, ոմանք թէ մէկը մի տարուց յետոյ և այլն.. Այդ այս վերև գրուածների զօրութեամբ հաստատումեն թէ Պետրոսի ողջ պատմութիւնը Հռոմ գնալու վերա, և հնաեղ եկեղեցի հիմնելու համար են սուտ կարծիք և առասպելաբանութիւն։

Ե. Պատմաբաններու վերև գրուածները թէ Պետրոս չէ գնացել Հռոմ, և ոչ թէ հաստատել է այն տեղ եպիսկոպոսական աթոռ, այլ առաջին եպիսկոպոսն Հռոմայ Լինոսն է, հիմնել են Գործք առաքելոցի պատմութեան վերա, և նոցա թղթերի վերա։ Եւ ինչպէս երևումէ Մխիթարեանքն էլ (Վենետիկցիք և Վենայեցիք) պապին հաճոյանալու համար աշխատումեն հաստատել թէ Պետրոսն է Հռոմայ եպիսկոպոսութեան հիմնադիրը, որ էնդուրով սեպհականեն նրան կարծեցեալ գլխաւորութիւնը ամենայն եկեղեցեաց վերա, և ընդհակառակն սխալվումեն գրուածքի մէջ, գրում են միմեանց հակառակ, և յայտնի երևումէ նոցա սուտիւնը, որոց գրուածները դնենք այս տեղ և գցենք քննութեան տակ։

Զամբեան (Պատ. Հայոց հատոր գ. յաղիւսակում) Պետրոսի Հռոմ գնալու տարին դնում է 43, Փափազեանցն 46 (Եկեղեցական պատ. երես 63), իսկ Գաթրճեանը 42 (Տիեզեր. պատ. երես 29), նահատակութիւնը գրում են Ներոնի ժամանակը. Զամբեանը և Փափազեանը 66 թուին, իսկ Գաթրճեանը 67 կամ 68 թ. և այսպիսի անհամաձայն հաշուով Պետրոսի կարծեցեալ եպիսկոպոսութիւնը Հռոմայ մէջ առաջինի գրելով է 23, երկրորդինը 20 և երրորդինը 25 կամ 26. և ճշմարտութիւնը մնում է անորոշ։ Ուրեմն այն պատմաբաններու խօսքերն են հաւատարիմ, որք ժամանակակիցներ են։ Ուստի բաց անելու պապականներու ճշմարտութիւնը կամ ստութիւնը այս խնդրի վերա, առաջ բերենք Գործք առաքելոց գիրքը, որի մէջ ոչինչ յիշատակութիւն չկայ Պետրոսի Հռոմ գնալու համար, ոչ առաքելոց թղթերումը, և ոչ թէ հէնց իրան Պետրոսի. թէպէտ Գաթրճեանը գրում է, թէ „ըստ սոյդ պատմութեանց (պատմիչն անյայտ), եկն նա (Պետրոս) յամի իբրև 42 'ի Հռոմ փախսակեայ Յերուսաղեմէ՝ անտի դարձաւ նա Յերուսաղէմ (ժամանակն անյայտ), որ սքանչելեօքն ապրեցաւ 'ի հալածմանէ Հերովդի Եպիսկոպոս Ե։ Յետ սորա վախճանին (44) դառնեմք զնա դարձեալ Յերուսաղէմ, յամի իբրև 52, և որպէս վաղագոյն ասացաք (ոչինչ չունի ասած) եղև գսրծակից հաստատութեան Եկեղեցւոյն Կորնթոսի ընդ Պաւղոսի (սուտ է խօսում, այլ Պօղոսն է հաստատողը, ինչպէս գրում է եր. 27)։ „Եւ յետ այնորիկ վկայեաց նա 'ի Հռոմ, 'ի հալածանս Ներոնի“ (երես 29)։ (Ավ Եսպասիանոսի ժամանակը նահատակուեցաւ)։ Բայց Գաթրճեանի գրածը ոչ այլ ինչ է, եթէ ոչ պառաւներու առասպելաբանութիւն։

Զ. Ավելի գրած խնդիրը պարզում է Պօղոսի պատմութիւնը գրած Գործք առաքելոցի մէջ, և նորա անցքերի տարեթիւը դնում են Մխիթարեան վարդապետները՝ 1) Ինախոք քաղաքումը ընկաւ հաւատացեալ Հրէից և հեթա-

նոսներու մէջ խարութիւն Մովսիսական օրէնքի վերա, և այս խնդիրը վճռելու համար գնացին Պօղոս և Բառնաբաս Երուսաղէմ առաքելոց և երիցներու մօտ։ Գնալու ժամանակը դնումեն Ղամշեանը և Փափազեանը 54 թուին, և Դաթրճեանը 52 թուին. և այս եղաւ կրօնականի առաջին ժողովը, ուր գտնուեցաւ և Պետրոս (Գործ. ԺԵ.)։ Այս ժողովի վճիռը Պօղոս և Բառնաբաս տարան Անտիոք, ու յետոյ շրջելով քարոզութեամբ զանազան տեղերում 14 տարի՝ կրկին անգամ Պօղոս գնաց Երուսաղէմ առաքելոց և երիցներու մօտ (Գաղ. բ. 1), ուր գտնվումէր և Պետրոս, և մի քանի օրից յետոյ Հրէից մատնութեամբ հաղարապետն հրամայեց կապել Պօղոսին շղթայով (Գործ. իա. 15)։ Երկու տարի բանտումը լինելուց յետոյ եկաւ Փեղիքսի տեղ Փեստոս (Գործ. իգ. 27)։ Նա էլ մէկ տարի վերահասութիւն անելով Հրէից գանկատանքներին Պօղոսի վերա՝ ուզարկեց նրան երեք տարի բանտարկութիւնից յետոյ Հռոմ կայսեր մօտ, ուր բռնված էր երկու տարի։ Ու այս տեղ վերջանումէ Ղուկասի գրած Գործք առաքելոց պատմութիւնը։ Միայն այս է գիտենալու, որ Ղամշեանը Պօղոսին Հռոմ ուղարկելը գրումէ 60-ին. Դաթրճեանը՝ 61-ին, և Փափազեանը 62 թուին, և ոչինչ ուղեղ բան չէ երևում, ինչպէս տարեթուերից, նոյնպէս և Պետրոսի Հռոմ գնալու պատմութեան մէջ, և միայն մաթէմաթիդայն կարող է պարզել հաշիւը և ցոյց տալ ուղղութիւնը նոցա գրած տարեթուերով թէ Պետրոս չէ գնացել Հռոմ, և չէ նահատակուած այն տեղ Պօղոսի հետ և ոչ թէ նոցա նահատակութիւնը եղել է Ներոնի օրով։

| | Ղամշեանի և Փափազեանի հաշուով։ | Դաթրճեանի հաշուով։ |
|---|---|---|
| Առաքելոց ժողովը Անտիոքայ խնդիրը վճռելու համար եղաւ թուին . . . . . | 54 . . . . . | 52 |

| | | | |
|---|---|---|---|
| Պօղոս 14 տարուց յետոյ կրկին գնումէ Երուսաղէմ . . . | 14 | . . . . . | 14 |
| Պօղոսի կապանքը մինչի Հռոմ գնալը . . . . . | 3 | . . . . . | 3 |
| Հռոմ մնումէ բանտումը երկու տարի, և այս տեղ վերջանումէ առաքելոց պատմութիւնը : | 2 | . . . . . | 2 |
| Փրկչական թիւն է . . . . . | 73 | . . . . . | 71 |
| Ներոն կայսր մեռանի յամին . | 68 | . . . . . | 68 |
| Այս հաշուով Պետրոսն ու Պօղոսը մնումեն կենդանի Ներոնի մահից յետոյ . . . . . | 5 | . . . . . | 3 |

Ուրեմն Պետրոս չէ գնացել Հռոմ, պատճառ որ Պօղոսի երկրորդ անգամ գնալն Երուսաղէմ պատահեցաւ 66 կամ 68 թուին, ինչպէս երևումէ վերև գրուած տարեթիւներից 54+14 կամ 52+14= որ պապականներու հաշուով համարվումէ նոցա նահատակութեան տարիքը : Եւ այս երեք պատմաբաններուց, Զամչեանը և Փափազեանը գրում են միմեանց համաձայն, որ 68 թուին մեռաւ Ներոն, Պետրոս Երուսաղէմումն էր, և ընդհանուր կարծիքով, երկու ձայնը աւելի հաստատ է՝ քան թէ մէկ ձայնը, որպիսի է Գոթերբաձեանին, որ առաքելոց ժողովքի թիւը երկու տարի պակեցնումէ, և ընդհակառակն Պօղոս դեռ 71 թուին կենդանի է, իսկ Ներոն երեք տարի առաջ է մեռած : Ուրեմն Պետրոսն ու Պօղոսը միասին չեն նահատակուած, և ոչ թէ Ներոնի ժամանակ, և այս անցքի պատմութիւնն է կարծիքական, չունելով ոչինչ հիմն նոր Կտակարանից և ոչ թէ ականատես պատմաբաններուց :

Ը. Պապականներն ասումեն ինչպէս Գոթերբաձեանը, թէ ,,Սուրբն Պետրոս 42 թուին Երուսաղէմից փախստական գնաց Հռոմ: Յետոյ դարձաւ Երուսաղէմ, ուր հրաշքով ազատ-

ուեցաւ Հերովդէսից, և սորա մեռնելուց յետոյ (44 թուին) կրկին տեսնում ենք նրան Երուսաղէմում 52 թուին, և յետոյ միւս անգամ Անտիոքում, և Պօղոսին դուրս անելից եղաւ Կորնթացոց եկեղեցին հանձնարարելու։ և ապա նահատակեցաւ Հռոմի Կերոնի ժամանակ։։

Դիտենք այժմ պապականների այս բանը, նախ՝ նոքա ասում են թէ Պետրոս հանձնարարելով եպիսկոպոսութեան աթոռը Հռոմի քաղաքում 25 տարի շարունակ մնաց այն տեղ մինչև իւր մահը։ Սուտ չէ՞ արդեօք այս խօսքը, որ 42 թուից սկսած տեսնում ենք նրան Հռոմում, յետոյ Երուսաղէմում, կրկին ուրիշ տեղ, ապա էլի Երուսաղէմում, յետոյ կրկին Անտիոքում, ապա Կորնթոսում, և վերջը Հռոմում, ուր նահատակվում է, կարելի՞ է արդեօք այսչափ տեղեր թափառողը 25 տարի շարունակ մէկ տեղ մնայ։ Երկրորդ՝ Պետրոսի քարոզած տեղերը պարզ ցոյց է տալիս Գործք առաքելոց գիրքը, որք են՝ Հրէաստան, Գաղատիա, Պոնտոս, Կապադովկիայ, Պաղեստին, Փռիւգիայ, կա՞ արդեօք այն տեղ Հռոմի անունը։ — անէնդէին ոչ։ Ուրեմն Պետրոս չէ եղած Հռոմ։ Երրորդ՝ Պետրոսի գրած Կաթուղիկեայց թուղթը և արտաքին պատմաբանները ցոյց են տալիս, որ նա քարոզեց Պարսկաստանում և Սորեստանում։ 1) Պետրոս Բաբելոնից գրում է թուղթ Պոնտացոց, Գաղատացոց, Կապադովկացոց, և Բիւթանացոց վերա, և վերջացնում է գրութիւնը այս խօսքերով ,,Ողջոյն ասայ ձեզ՝ որ 'ի Բաբելոն ընտրեալքիս եկեղեցին է, և 2) Աբգար թագաւորի նամակներից, զորս գրեց Բաբելոնի թագաւոր Սերսեհի վերա, և նորա հայր Արտաշէս Պարսից թագաւորի վերա, դրան խորենացին բերում է իւր պատմութեան մէջ, թէ ,,Զբնկերաց նորա (Թադէոսի) զլեսաւորաց Սիմոն անուն, այդր 'ի կողմանս Պարսից առաքեալ է, խնդիր արարեալ լուցեն նմա . . . : Մի յաշակերտաց Նորա (Քրիստոսի) զլեսաւորաց Սիմոն անուն է 'ի կողմանս քոյոյ ուղարկեալ։։ (Գիրք բ. գլ. լգ.)։

Ը. Սուրբն Պետրոս, ինքպէս վերևը տեսանք գրում է թուղթ նոցա վերա, ուր որ քարոզել էր ինքն և եկեղեցիք էր հաստատել, ուրեմն ինչո՞ւ չէ յիշում և Հռովմայ անունը, եթէ այն տեղի եպիսկոպոսութեան հիմնադիրն էր կամ եկեղեցոյ հաստատող. մանաւանդ որ Սերոնի օրովը մեծ հալածմունք կար քրիստոնէից վերա, բայց մենք տեսնում ենք՝ որ Պօղոս առաքեալն է գրում թուղթ Հռովմէացոց վերա, որի մէջ յայտնում է իւր մեծ ցանկութիւնը տեսնել նրանցը, ինչպէս Յունաց և բարբարոսներուն պարտական է՝ այնպէս էլ Հռովմէացոց աւետարանել (Հռովմ. ա. 9–16), սրանէն երևում է, զի թէ Պետրոս քարոզած լինէր Հռովմ և հաստատող եպիսկոպոսութեան աթոռին՝ երբէք չէր գրել Պողոս, թէ ,,որպէս Յունաց և բարբարոսաց պարտական եմ՝ նոյնպէս և ,,Հռովմէացոց աւետարանել'' և վերջին գլխումն ողջոյն տալով ամենայն ծանօթներուն, որ Հռովմումն էին ամենևին չէ յիշատակում Պետրոսի անունը (Հռովմ. ԺԶ.), որից երևում է որ Պետրոս չէ եղած Հռովմում, և ոչ թէ եպիսկոպոսական աթոռի հիմնադիրն է, այլ պատմաբաններու ասելով Լինոսն է համարվում առաջին եպիսկոպոս Հռովմայ, և շատ ճշմարիտ, զի և մաթէմաթիքայն նոյնն է հաստատում Հռովմայ եպիսկոպոսներու տարեթիւների համաձայն:

Ըստ Զամչեանին:

| | |
|---|---|
| Լինոս դամն . . . . . | 1 |
| Կղեմէս . . . . . | 9 |
| Կղեմոս . . . . . | 8 |
| Անակղետոս . . . . | 12 |
| Եւարիստոս . . . . | |
| Գումարն է | 35 |

Ըստ Փափազեանին:

| | |
|---|---|
| Լինոս . . . . . | 2 |
| Կղեմէս . . . . . | 9 |
| Անակղետոս . . . . | 12 |
| Եւարիստոս . . . . | 4 |
| Գումարն է | 27 |

Եւարիստոսի 5-դ տարումը լրանում է առաջին դարը, և հանելով հինգ եպիսկոպոսներու կառավարութեան տարիքը՝ 100 35 մնում է 65 ուրեմն Լինոս եպիսկոպոս նստեցաւ 65 թուին, որ դեռ Պետրոս կենդանի էր, որի մահը գնում են 66 կամ 68 թուին:

Եւարիստոսի 4-դ տարումը լրանում է առաջին դարը, և հանելով չորս եպիսկոպոսներու տարիքը 100 – 27, մնում է 73, որ է Լինոսի եպիսկոպոսութեան առաջին տարին և այս հաշիւը համեմատ է վերևը

գրած 6-ը յօդուածի հաշուի հետ՝ որ է Պօղոսի բռնուելու 2 տարին և Պետրոս դեռ չէր նահատակուած և Աղոդոսին չէ յիշում։

Արտաքին պատմիչները Լինոսի աթոռակալութիւնը հաշվում են 12 տարի, որ աւելցնելով պակաս 11 տարին Զամչեանի հաշուի վերա, կանէ 46 և գալիս է նորա եպիսկոպոսութիւնը 54 թուին. աւելցնելով Փափաղեանի հաշուի վերա պակաս 10 տարին՝ անում է 37, և նորա եպիսկոպոսութիւնը գալիս է 63 թուին՝ որ դեռ Պետրոսը կենդանի է մնում 4 կամ 5 տարի։

Թ. Պապականներն այսպիսի հաշուադրութեամբ հակառակում են միմեանց, և որի հաշիւն էլ որ քննում ենք, ոչ մէկը չէ հաստատում Պետրոսի գնալը Հռոմ. և եպիսկոպոսութեան աթոռի հիմնադիր լինելն և 25 տարի կառավարելը ինչպէս վիճակաւոր, և մանաւանդ որ Ղուկաս գրելով Գործք առաքելոց գիրքը՝ սկսում է Բրիսաոսի համբարձմանից որ է 32 թիւը մինչի 71 կամ 73 թիւը, որ է Պօղոսին կապանքով տանելը Հռոմ, և այս ժամանակը, որ է 41 կամ 39 տարի, որի մէջ Պետրոս պիտի Հռոմ գնացած լինէր անկարելի էր որ չյիշատակէր, եթէ յիրաւի գնացել է, բայց Գործք առաքելոցի 41 տարուայ պատմութիւնը ամենևին ոչինչ չէ յիշում այս բանի համար, որի մէջ բովանդակվում է Պետրոսի գործքերը։

Ժ. Պետրոսի մահուան համար ստոյգ պատմութիւն չըկայ, այլ զանազան են պատմաբաններու կարծիքները (ինչպէս ասացինք 4-ը յօդուածումը) նորա նահատակութեան տեղի վերա, այլ աւելի հաւանական է ասել՝ թէ Պետրոս նահատակուել է Երուսաղէմ Հրէից խռովութեան ժամանակը Վեսպասիանոսի կայսեր օրովը, որովհետև Պօղոսի բռնուելու տարեթուին մոտիկ տալով՝ նա Երուսաղէմէր, իսկ Հռոմում երբէք չէ նահատակուած, և թէպէտ պառաւական զրոյց են անում, թէ ,,Պետրոս Հռոմից փախչումէր՝ և Բրիսաոս երևեցաւ նրան, ու Պետրոս հարցրեց թէ Տէ՛ր, ո՞ւր ես

գնում. նա էլ պատասխանեց՝ գնումեմ Հռովմ կրկին խաչուելու և Պետրոս հասկացաւ որ իրան է ասում, վասն որոյ յետ դառաւ գնաց Հռովմ և խաչուեցաւ "Ներոնի ժամանակ" այս է միայնդամայն առասպել, և ծիծաղական. և ոչ պատմութիւն, շարադրութիւնը յայտնի ցոյց է տալիս նորա սուտ լինելը և այժմեան կրիտիքական դարի մէջ ամենքն էլ կծիծաղին այդպիսի զրոյցների (հէքեաթի) վերա, կարծեմ թէ պապականներն էլ կհամաձայնին ներսեհից մեզ հետ, որովհետև լաւ գիտեն՝ որ Պողոսին ասաց Քրիստոս երբ որ Հրէայք մատնեցին նրան Լիւսիաս հարիւրապետին, և նա համարձակ խոստովանեց Քրիստոսի Աստուածութիւնը, թէ "Քաջալերեաց՝ զի որպէս վկայեցեր վասն իմ Յերուսաղէմ, այնպէս պարտ է քեզ և 'ի Հռովմ վկայել" (Գործ. իգ. 11) Էհա ուղիղ պատմութիւն, որ Քրիստոս Պողոսին ուղարկեց Հռովմ, և այն տեղ կարելի է ասել՝ թէ նահատակուեցաւ, բայց ցոյց տան մեզ Պետրոսի համար՝ մէկ այսպիսի ուղիղ վկայութիւն առաքելոց գործքերի պատմութիւնից, Գործք առաքելոց գիրքը գրեց Ղուկաս Հռովմ քաղաքումը, թէ Պետրոսին այն տեղ տեսած լինէր կթողնէ՞ր առանց յիշատակելու այնպիսի երևելի անձին անցքերը Հռովմի մէջ: Ապա ուրեմն ունայն են աշխատում պապականներն Պետրոսի Հռովմ լինելու համար: Կարդան և Պողոսի այն բանը՝ որ գրում է Տիմոթէոսին Հռովմից իւր նեղութիւնը յիշելուց յետոյ, զոր կրել էր աղանդաւորներուց, թէ "Եղէ Տէր օգնեաց ինձ, և զօրացոյց զիս՝ զի ինձ քարոզութիւնն հաստատեսցի և լուիցեն ամենայն հեթանոսք": (գ. 17) Այս խօսքը թո՞ղ քննեն թէ ի՞նչ է նշանակում, "ինձմով քարոզութիւնը հաստատուի և ամենայն հեթանոսները լսեն": Եթէ Պետրոս 25 տարի այն տեղ էր և իւր քարոզութիւնը հաստատել էր, Պողոսն էլ ինչո՞ւ է գրում թէ ինձմով հաստատուի քարոզութիւնը, այսինքն եկեղեցին, չէ՞ որ այս բանը պարզ ցոյց է տալիս՝ որ Պետրոս ամենևին աչքով չէ տեսել Հռովմը:

# ՍՏՈՐԳՐՈՒԹԻՒՆ ԹՒՓԼԻՍԻ

(Հարունակութիւն և վերջ)։

## Ժ. ԸՊՔԵՍՏԱՀԱՆՈՒԹԻՒՆ։

Այնց թագաւորութեան ժամանակ արհեստահանութիւնը չէր ծաղկած, այլ մէկ դրութեան մէջ էր. և յաջորդական էր, այսինքն ամենայն մարդ սովորեցնում էր իւր զաւակներուն իւր արհեստը, վասն որոյ և շատ տնձիկք ունեցան իրանց ազգանունը արհեստից, զորօրինակ, Նալչադրեանք, Կլեկչեանք, Դէրձկեանք, Ճոնեանք, Խանջալսազեանք, Սհաթսազեանք, Խաբազեանք, Սարաջովեանք, Փանչուեանք, Նազշքրեանք, Աալատոզեանք, Մազմեանք, Ապրաչուեանք, Ներկարարեանք, Թուխներկողեանք, Միկիանեանք, Նալբնդեանք, Փինաչուեանք, Փալանդուզեանք, Ղօնդաղսազեանք, Սամթելոյեանք, Ռաշմազչուեանք, Էրզենդալաքեանք և այլն։ Այս մականունները յայտնի ցոյց են տալիս արհեստականութեան յաջորդութիւնը իւրաքանչիւր տան։ Մինչև 1801 թիւը Թիֆլիսը լինելով սակաւաբնակ, արհեստաւորն էլ այնչափ չէր ինչպէս այժմ, նրանց միաբանութիւնը կոչվում է Համքարկամ Սնաֆ, ինչպէս է և հիմա. ամեն համքար ունի մէկ գլուխ, որին ընտրում է ինքն և ասում են Ուստաբաշի, այսինքն վճռում են իրանց համքարի մէջ պատահած վէճերը, և ասասիկ նկատողութիւն ունին մէկմէկու հետ կուելու կամ անարգելու վերա, մեղաւորին դցում են տուգանքի տակ, որ կոչվում է Օրլ, եթէ չէ հնազանդվում փակում են դուքանը և ուստաբաշին ուղարկում է թայդուլ կամ խնձոր ամեն ուստաբաշիներու մօտ, որ ամեն

համքարին իմաց տան բանադրածի հետ չխօսել, ոչ առուտուր անել, մինչև որ հնազանդուի և եօլը տայ։ Համքարի մէջ գլխաւորը համարվումէր Դարբաղը, և սրա ուստաբաշին վճռումէր միւս ուստաբաշիների վէճը։

Մեն համքար ունի եկամուտ. 1) եօլի, որ առնումեն յանցաւորից. 2) ուստայ օրհնելու փողը. 3) մեռելի վերա, որ հրաւիրումեն, իւրաքանչիւրը իւր կարողութեան համեմատ տալիս է քէլէխի փող. 4) մատաղի փողը, որ հաւաքումեն իրանց միջից, և այս ամենը պահումէ ուստաբաշին, այս գումարից տալիս են եկեղեցեաց շինութեան համար, տղքատ աղջկերանց մարդու տալու համար, վերերու ապատութեան համար։ Սյսպիսի բարեգործութեան հետ ունին և շռայլութիւն. 1) Եկեղեցոյ շինութեան վերա իրանք են բանում, և այն օրուայ ագուռի, ուստի և մշակի փողը տալիս են իրանք, բանումեն մինչև սահաթի երկուսը, և յետոյ դրօշն (բայրաղը) բացած, զուռնաչիքն առջևը փչելով գնումեն քէֆ անելու, և ուտել խմելու համար էլ չոկ փող են վերեկած, մինչև մութը խմումեն, սրանով վնաս են քաշում, մէկ որ դուքանիցն են ընկնում. երկրորդ՝ երկու տեսակ ծախս է լինում, շինութեան և սեղանի համար, և երրորդ՝ հարբած ժամանակը կռիւ է պատահում, և եօլի տակն են ընկնում, շատ լաւ կլինէր, որ շինութեան նուէրը տուել էին, իսկ իրանք իրանց գործին էին կացել. 2) սովորութիւն ունին որ դատկի քառասունքի մէջ ամեն երկուշաբթի հուքմեն պահում, և փող են հաւաքում մատաղի համար, կան մի քանիսը, ինչպէս Ռուրքչիքը, որ եկեղեցոյ պարսպումը կմորթեն մատաղը կեփեն, և լոշումը փաթրթած միսը կբաժնեն, իսկ մնացածները զուռնա դհոլով կերթան բաղերը, և կսկսեն լաւ կօնծել, ուր պատահումէ գանազան անկարգութիւն, — խորհուրդ կտանք, որ հետևին ամենքն էլ Ռուրքչերու օրինակին։ Եթէ հեռու կենան այս տեսակ շռայլութիւնից, որից ոչինչ օգուտ չկայ բաց ի վնասից, պահեն և շահեցնեն հաւաքած

փողը, և բոլոր համքարութիւնը ունենայ մէկ գանձարան, այն ժամանակ կարող են իրանց փողով ուսումնարաններ բաց անել, և իրանց զաւակներուն ուսումն տալ:

Թիֆլիզցու համքարը իւր վաստակից տալիս է սուրբ Էջմիածնին տարեկան մոմագին, որի արձանագիրը կայ Տաճարի հարաւային կողմն մեծ դռանը այսպէս՝ ,,Կամաւն Աստուծոյ մեք Թիֆլիզցու ամենայն Ազնուք և Դուքանդար խոստացաք տարէնն ամեն դուքան մէկ մէկ չարեք մոմ տալ սուրբ Էջմիածնայ և միաբանք սուրբ Աթոռոյս խոստացան հինգ նաւակատեացն զմեզ պաշտամամբ և պատարագօք յիշատակել: Թուին ռճլա. (1682) 'ի հայրապետութեան տեառն Աղիսաղարու'': Այժմ մէկ չարէք մոմի փոխանակ տալիս է ամեն մէկ ուստայ քառասուն կոպէկ:

Ով որ կամենայ արհեստականութիւն սովորել, նա պէտք է ծառայէ մինչև պայմանադրեալ ժամանակը, և յետոյ վարպետը ստանալով պարգև, որ կոչվում է դասատուրահաց, խնդրում է Աստաբաշուն օրհնել նրան ուստայ. ուստայացուն ճաշ է շինում համքարի համար, ուր հրաւիրում են քահանայ, որ կատարում է աշակերտօրհնեքի կանոնը, ապա ուստաբաշին երեք ապտակ է խփում և օրհնում. կապում է մէջքին փէշտամալ, որ երեք օր պիտի ունենայ կապած:

Երբ որ համքարից մէկը մեռնում է, նորա համքարը դուքանները փակում են մինչև թաղելը:

Թիֆլիզցու այժմեան արհեստաւորներն ու առուտուր անողներն են սոքա:

1 Ագուռչի:
2 Ելափ:
3 Բազազ:
4 Բաշմաղչի:
5 Բրիլիանտչի:
6 Բաղկալ:
7 Բաննահ:
8 Բամբակ ծախող:
9 Բրուտ:
10 Բուրդ ծախող:
11 Բիչաղչի:
12 Գաջբազ:

13 Դրավաճառ։
14 Դաբաղ։
15 Դամբ կամ չանգալ դցող։
16 Դերձիկ։
17 Դարբին։
18 Դալալ։
19 Դալլաք։
20 Դուրգար։
21 Դրոշկաչի։
22 Նշանջի ծախող։
23 Նրկաթ ծախող։
24 Զարնչանչի։
25 Զառափ։
26 Թոքմաչի։
27 Թոկ ծախող։
28 Թուլթունչի։
29 Թուլուխչի։
30 Թուր շինող։
31 Լէհնչի։
32 Խարազ։
33 Խանչալսազ։
34 Խուրձ։
35 Խոտ ծախող։
36 Խալիչա ծախող։
37 Խոզ մորթող։
38 Ծուղաղուկ։
39 Կալասկապան։
40 Կլեկչի։
41 Կինտոյէք։
42 Կպրաչի։
43 Կարէտնիկ։
44 Կանդիտէր։
45 Կաղմարար։
46 Հալիլա շինող։
47 Հաց թխող։
48 Հաւ ծախող։
49 Ձկնապան։
0 Ղահվաճի։
51 Ղալթաղչի։
52 Ղասաբ։
53 Ղազազ։
54 Ղոնդաղսազ։
55 Ղոն։
56 Մազման։
57 Միրկիտանա։
58 Մոմածող։
59 Մանրում ծախող։
60 Նալչագար։
61 Նաղշքար։
62 Ներկարար։
63 Նալբանդ։
64 Շաքար ծախող։
65 Շուշաչի։
66 Շոր ծախող։
67 Շուշեղէն ծախող։
68 Շլապկա կարող։
69 Շիրաչի։
70 Ոսկերիչ։
71 Ձիրուխչի։
72 Ձուաա կարող։
73 Ձոր միրգ ծախող։
74 Պղնձագործ։
75 Պօրտնոյ տղամարդու։
76 Պօրտնոյ կնկտերանց։

77 Ջուլֆակ։
78 Սարաջ։
79 Սապոժնիկ։
80 Սաղըչի։
81 Սոչլեար։
82 Սազբանդ։
83 Սլեսար։
84 Սահաթսազ։
85 Տրախտիրոչիկ։
86 Տրեխ կարող։
87 Փալանդուզ։
88 Փանառչի։
89 Փինաչի։
90 Փոնչի։
91 Փոխան ծախող։
92 Քաբաբչի։
93 Քանքանչի։
94 Քարտաշ։
95 Քուրքչի։

—

Մեկ համքար էլ նոր է աւելցել՝ որ կոչվում է Քէլէխ ուտող, սրանք մարմնով առողջ են, և իրանք արհեստի տէր, բայց ձեռք են վերառել աշխատանքից և քէլէխ ուտելով են մանգալի, տանը ցաց թողել են ողորմելի, իսկ իրանք պտըտում են կիսեղեցիքը կամ կուբօ (դագաղ) շինողներու դուքերը իմանալու, մեռել կայ թէ չէ. և ի՞նչ լաւութեան պէտք է սպասել սրանց գործերից, որ իրանց հայրերի ճանապարհն են գնում։

Արհեստականութիւնը հետզհետէ ծաղկում է Թիֆլիզում Եւրոպացի արհեստագէտների ձեռքով, որոց մօտ կան Թիֆլիզցի տղայք և սովորում են։ Այս ամենայն յառաջադիմութեան պատճառն է Ռուսաց օրհնաբանեալ տէրութիւնը, որ իւր հպատակների լաւութեան և լուսաւորութեան համար միշտ հոգս է անում։ Այրաց ժամանակը՝ որ արհեստականութիւնը յաջողդաբար էր տան մէջ, այժմ շատ արհեստաւորների տղայք, ոմանք՝ աւարտելով իրանց ուսումը, Տէրութեան ծառայութեան մէջ են, և ոմանք էլ պատերազմներումը գտնուելով՝ ստացել են զինուորական աստիճան, և համարվում են ազնուականների շարքումը։

Ա. Տէր Յակոբեանց։

# ԿԵՆՏՐԻ

## ԸՄԲՆԵՐԱՆԻԿ ԺԱՄԱՆԱԿԸ։

Մարդասիրութիւնն, անկարծիք ստիպեց Միկերոնին գովել ծերութիւնը, սակայն չեմ կարծում, որ նորա քնութիւնն իսկապէս միխիթարէ ծերերուն, սրամտութիւնն հեշտութեամբ կը գրաւէ իմաստը, բայց դժուար է յաղթել հոգւոյ մէջ բնական զգացմունքին։

Կարելի՞է գովել հիւանդութիւնը, իսկ ծերութիւնն է նորա քոյրը։ Դադարինք խաբել մեզ և ուրիշներուն, դադարինք ապացուցանել, թէ բնութեան ամենայն ներգործութիւնքը և նորա ամենայն երևոյթները մեր համար արդիւնաւոր են—կարելի՞է ընդհանուր ձևի մէջ, այլ որովհետև նա յայտնի է միայն Աստուծոյն, ուրեմն մարդն չէ կարող մտածել նիւթերի վերա այս յարաբերութեան մէջ։ Կարծիքն, թէ ամենայն ինչ աշխարհումն դէպ ի լաւն է գնում (օպտիմիզմ) չէ փիլիսոփայութիւն, այլ մոքի խաղարկութիւն։ Փիլիսոփայութիւնն միայն պարապումէ պարզ ճշմարտութիւններով թէպէտ և տրտմականներով, մերժումէ սուտիւնը, թէ և հաճոյականը։ Աստուած չկամեցաւ իւր գործքերի վարագոյրները բանալ մարդոյ համար, և մեր կարծիքները երբէք չեն ունենալ սուտ գալու զօրութիւն։—Հակառակ Ժան—Ժակ—Ռուսոյին, (ասումէ) ,,մանկութիւնը, թոյլ կեանքի այս ամենօրեայ պատերազմը անյաղ մահուան հետ, պէտք է երևայ մեզ ողորմելի, հակառակ Միկերոնին՝ ծերութիւնն է աքրամալի, հակառակ Լէյբնիցուն և Պոնուն՝ այս աշխարհն մընումէ համբերութեան ուսումնարան։ Ունայն տեղը չունէին ամենայն աղգեր հին աւանդութիւնը, թէ մարդոյ աշխարհային վիճակը է նորա անկումն կամ պատիժ, այս աւանդութիւնը հիմնած է սրտի զգացողութեան վերա։ Հիւանդութիւնն սպասումէ մեզ այս տեղ մնալու և երթալու ժամանակը, իսկ կեանքի մէջ տեղը, առողջութեան վարդերի տակ, ծածկուած է սրտի վշաերի օձը։ Ներկրութեան կենդանի զգացմունքը ունի իւր մէջ պակասութիւն ինչ, ամենակարելի երջանկութիւնը երկրի վերա՝ որ այնչափ հապուռապիւտ է, խաւարվումէ մտածողութեամբ, կամ մենք կթողնենք նրան, կամ նա կը թողնի մեզ։

Մէկ խօսքով, ամեն տեղ և ամենայն բանի մէջ շրջապատումն մեզ պակասութիւնքը։ Սակայն բաւերը՝ բարի և երջանկութիւն, իրաւունքով ունին տեղ այս աշխարհի բառարանի մէջ։ Համեմատութիւնը ամենքին էլ սահմանումէ դին — մէկը լաւ է միւսից—ահա բարին. մէկը լաւագոյն է քան զմիւսը—ահա երջանկութիւն.

Կեանքի որ շրջանը կարելի է անուանել ամենի երջանիկ ըստ համեմատութեան։ Ոչ այն՝ որին մենք հասնում ենք մինչև ֆիզիքական կատարելութիւնը կեանքի մէջ (որովհետև մարդս միայն կենդանի չէ), այլ ֆիզիքական կատարելութեամբ վերջին աստիճանը—նոյն ժամանակը, երբ բոլոր հոգեկան ընդունակութիւնքը իրանց վերջին ուժը թափելով ներգործումեն իրանց լրութեան մէջ, իսկ մտաւորական զօրութիւնքը դեռ յայտնապէս չեն նուազում, երբ մենք արդէն գիտենք և ճանաչումենք աշխարհին և մարդկանցը, նրանց դէպ ի մեզ ունեցած յարաբերութիւնները, կրքերի խաղարկութիւնը, բերկրութեանց արժողութիւնը և նոցա համար սահմանուած բնական օրէնքը, երբ որ մեր միտքը—հաստատ է գաղափարներով, համեմատութիւններով և փորձերով գտնումէ նիւթերի իսկ չափը և նորա հետ համաձայնեցնումէ սրտի ցանկութիւնքը և տալիս է կեանքին հանձար և մի ընդհանուր ձև։ Ինչպէս ծառի պտուղը, նոյնպէս էլ և կեանքը թառամելուց առաջ ամենքից աւելի քաղցր է լինում։

Այս ճշմարտութիւնը ինձ պատցուցանումէ մարդոյ ազնվութիւնը։ Եթէ որ մտաւորական բարոյականութիւնը մի պատահական սեփականութիւն լինէր մեր դոյութեան համար (ինչպէս որ մի քանիսը հաստատումէին) և միայն ընկերական կապակցութիւնների հետևանք, որոց մէջ մենք բնութեան ճանապարհներիցը բոլորովին ծռուելով մտել ենք, ուրեմն նա իւր բաւականութիւններով չէր կարող մեզ համար երիտասարդական ծաղկած օրերի եռանդոտ ողևորութեան տեղը բռնել, ոչ թէ միայն նոցա տեղը բռնել՝ այլև բարձրացնել կեանքի արժանաւորութեան դին. որովհետև մարդս ստանց կասկածանաց երեսունուհինգ տարեկանից դէնր արդէն իւր կրքերով այնպէս չի բորբոքվում, ինչպէս որ բորբոքվումէ երիտասարդը, և իսկապէս առաջինը երկրորդից աւելի բաղդաւոր կարող է լինել։

Այս ժամանակում մարդիկ ըստ մեծի մասին պատկուելով հայրեր են լինում և զարձանում են իրանց կեանքի մէջը ամենաճշմարիտ ուրախութիւնով—ընտանեկան ուրախութիւնով: Մենք մեր գոյութեան երկրագնային սահման ենք դնում, որպէս զի բաւականութիւնների ետևից հեռի չվազենք, ցնորական և ախորժեան աշխարհումը ճանապարհորդութիւն չանենք, բնակվում ենք տանը, ըստ մեծի մասին մեզ ումեկ ենք կենում, շատ քիչ բան ենք պահանջում մարդկանցմէն և աշխարհիցը, շատ քիչ ենք նեղանում ապաբախտութեան պատահած ժամանակը, որովհետև շատ քիչ ենք սպասում բարերաղդ հանգամանքներին: Վիճակը ձղուած, դրութիւնը ընտրած է, հաստատուած է, աշխատում ենք նորա արժանաւորութիւնը օգուտներով բարձրացնել հասարակութեան համար, կամենում ենք թողուլ աշխարհումը մեր գոյութեան բարեգործ հետքերը, երեխանց սնունդը, տնտեսութիւնը, թագաւորական պաշտօնները լինում են մեր համար հոգեկան բերկրութիւնք, իսկ բարեկամութիւնը և ընկերութիւնը քաղցր հանդիստ....: Դաշտերը, մեր աշխատանքներով հարստացած,—այդին, մեզմով շինուած, երկրագործների մեզմէն շնորհակալ են, տանեցոց երեսները հանդիստ են, նոցա սրտերը մեզ հաւատարիմ են—աւելի են ուրախացնում փորձառած մարդոյ խաղաղ հոգին, քան թէ այս շփոթող զբօսանքները. սոքա երևակայութեան և կրքերի ցնորքներ են, որք խաբում են մանկութեանը. Առողջութիւնը, որ այնքան սակաւ յարգի էր մատղաշ տարիքներում, լինում է կատարեալ հասակումը ճշմարիտ երջանկութիւն կեանքի, նոյն իսկ զգացմունքը ևս առաւել լինում է այն ժամանակ հաճոյական, երբ արդէն սրընթաց թռել է նորա կէսը . . . : Այսպէս աշնան պարզ օրերու մնացորդները տալիս են մեզ յայտնի զգալ բնութեան գեղեցկութիւնը, որ շուտով ամեն էլ կթառամի, երկնչում ենք թողնել և մի բոպէն առանց զուարճութեան: Պատանին անշնորհակալ է՝ որ շփոթուած է անորոշ ցանկութիւններով, անհանդիստ է իւր զօրութեանց ատատութեան օրից, անզգուշութեամբ գնում է նա ծաղկանց վերա, որովք բնութիւնը և վիճակը զարդարում են նորա շաւիղը աշխարհի մէջ. մարդս, փորձուած փորձերով, սաստիկ տառապանքների մէջ սիրում է արտասունքով

շնորհակալութիւն անել Երինքին ամենափոքր մխիթարութեան համար։

Այս իսկ ժամանակին ներգործում է և հանդիսանում է հանճարը . . . : Պարզ հայեցուածքը աշխարհի վերա բաց է անում ճշմարտութիւնը, սաստիկ երևակայութիւնը ներիայացնում է նորա գծագրութիւնը ազգու և ուժգին, հասունացեալ ախորժակը զարդարում է նրան պարզութեամբ, և մարդկային մտքի վաստակները երևում են կատարելութեան մէջ, վերջապէս արարիչը վստահանում է ձեռքը ձգել դէպ ի յետագայքը, լինել դարերին ժամանակակից և սիեղերքին քաղաքացի։ Անկութիւնը սիրում է փառքի մէջ միայն աղաղակ, իսկ հասունացեալ հոգին—ուղիղ, և հիմնաւոր ճանաչողութիւն նորա օգտակար գործողութեան աշխարհի համար։ Ճշմարիտ փառասիրութիւնը չէ շփոթում, չէ տանջում, այլ քաղցրութեամբ հանգստացնում է հոգին, ապականութեան և մահուան արձանների մէջ բացում է նորա համար տաղանդների և հանճարի անմահութեան ճանապարհ, միտքն մխիթարական է գոյացութեան համար, որ այնքան սիրում է ապրիլ և ներգործել, բայց ոչ յաւիտենական իւր ֆիզիքական գոյութեամբ։

Ծաղկեա՛լ մանկութեան և սաստիկ ցանկութեանց օրեր, չեմ կարող ափսոսալ ձեր համար։ Յիշում եմ հրճուանքները, բայց յիշում եմ և իմ վիշտը, յիշում եմ հրճուանքները, բայց միտքս չէ դալի երջանկութիւն, այն չկար զգացողութեանց այս մրրկալից ձկտման մէջ դէպ ի անպատար զարթնութիւնը, որ լինում է տանջանք, այն չկայ և այժմ իմ համար աշխարհի մէջ—այլ ոչ կրքերի բորբոքման հասակում, այլ մտքի կատարեալ ներգործութեան մէջ, նորա խաղաղ աշխատանքների մէջ, միակերպ և հանգիստ կեանքի անվրդով բաւականութեանց մէջ, ես կամենում էի ասել արեգակին՝ կա՛ց, եթէ մի և նոյն ժամանակ կարողացել էի ասել և մեռելներուն՝ վերկացէք գերեզմանից։

# ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԼԻԹԸ։

1։ Ձեռը երեք մասից է բաղկացած. վերին մասը, ուսիցը սկսած մինչև արմունկը, կոչվում է Ուս, միջին մասը, արմունկիցը սկսած մինչև դաստակը, կոչվում Արմունկ, իսկ ներքին մասը կոչվում է Դաստակ։

2։ Ոտը նոյնպէս երեք մասն է բաժանվում. վերին մասը, Ոնիցը սկսած մինչև ծունկը, կոչվում է Զգդր, միջին մասը, ծնկիցը սկսած մինչև ներբանը,—Ոլոգ, իսկ ներքին մասը,—Ներբան։

1։ Դաստակի մէջը Ձեռի Ափ և Մատներ կան։ Իւրաքանչիւր ձեռի վերայ հինգ հինգ մատներ կան։ Իւրաքանչիւր մասը, բաց 'ի բթիցը, երեք խաղերից է կազմված, միայն բութն է երկու խաղերից կազմված։ Նդ փափուկ մատների ծայրերին, վերևիցը, դասաւորված են պինդ եղջիւրատեսակ եղունգներ։

2։ Ներբանի վերին մասը կոչվում է Ոտի երես, ներքին մասը—Ոտի տակ, վերևի մասը—Դարշապար, ներբանի առաջի կողմիցը դասաւորված են հինգ մատներ։ Ոտների իւրաքանչիւր մատները երեք երեք խաղ ունին և մի մի եղունգներ, (բութը երկու խաղ ունի), բայց ոտների մատները էնքան երկայն, փափուկ և շարժական չեն, ինչպէս ձեռների մատները։

Թռչունները երկու ոտներ ունին, բայց ձեռների փոխանակ—թևեր ունին, ձին, կովը, կատուն, ճագարը և էլի ուրիշ շատ գազաններ—չորս չորս ոտներ ունին, բայց ամենևին ձեռներ չունին, կապիկների բոլոր չորս անդամները—ձեռներ են։ Թռչունները Թևաւոր են կոչվում, էն գազանները, որոնք չորս ոտներ ունին, Չորքոտանի են կոչվում, բայց կապիկները—չորս ձեռը ունեցող կենդանիներ են կոչվում, միայն մարդուն կարելի է երկու ձեռը ունեցող կենդանի կոչել։

1։ Աստարկաների գոյնը, մեծութիւնը, թիւը և ձևը ես Տեսանելիքով եմ զանազանում. բաղխումը, աղաղակը, շշունջը,

ձայնը, ուրիշ մարդու խօսելը և ուրիշ տեսակ հնչիւնները ես Լսելիքով եմ զանազանում. առարկաների հոտը — Հոտոտելիքով, ճաշակը — Ճաշակելիքով։ Շօշափելիքով ես զանազանում եմ առարկայի ձևը և մեծութիւնը, բաց 'ի դրանից, շօշափելիքով ես իմանում եմ առարկայի պնդութիւնը կամ նօսրութիւնը, ծանրութիւնը կամ թեթևութիւնը, տաքութիւնը կամ սառնութիւնը, անհարթութիւնը կամ հարթութիւնը։

2։ Տեսանելիքը, լսելիքը, շօշափելիքը, հոտոտելիքը և ճաշակելիքը մարդուս հինգ արտաքին կամ մարմնական զգայարանքներ են կոչվում, — սորա զանազանվում են Ներքին կամ Հոգեկան զգայարանքներից, որոնք են, ցաւ, ուրախութիւն, բարկութիւն, սէր, շնորհակալութիւն և այլն։

3։ Ես նայում եմ աչքերով, լսում եմ ականջներով, հոտոտում եմ քնթով, առարկաների ճաշակը կամ թէ համը որոշում եմ լեզուով, շօշափում եմ համարեա թէ իմ բոլոր մարմնով և մանաւանդ մատներիս ծայրերովը, ես խօսում եմ բերանով, շնչառնում եմ բերանով և քնթով, մեն եմ գալիս ոտներով, գործում եմ ձեռներով, ծամում եմ ատամներով, կերակուրը մարսում եմ ստամոքսով։ Իմ մարմնուս էն իւրաքանչիւր մասը, որը մի առանձին պաշտօն է կատարում, Գործի կամ Գործարան է կոչվում։

4։ Մարդուս ամբողջ մարմինը շատ զանազան և նրա համար կարևոր գործարաններից է կազմված, և էդ պատճառով էլ երբեմն ողջ մարմինը գործարանների կազմութիւն է կոչվում, այսինքն, շատ գործարանների միութիւն և էդ գործարաններից իւրաքանչիւրը մի առանձին պաշտօն է կատարում և բոլորը միասին մարդուս ապրելու կարողութիւն են տալիս։

5։ Ոչ մարդը, որը թէև մի հարկաւոր գործարանից զրկված լինի, կամ թէ նրա մի գործարանը ինչպէս որ հարկն է չը ներգործի, շատ տխուր կեանք է վարում։ Դժուար է ապրիլ էն կոյր կամ թէ քօռ մարդու համար, որը տեսանելիք

չունի, հեշտ չէ և էն համրի համար, որը իրան մոքերը և ցանկութիւնները չի կարողանում բառերով յայտնել, ցաւալի է նոյնպէս էն անդամալոյծը (ֆիզիքական արատաւոր), որը իրան ձեռն ու ոտը չի կարողանում շարժել։

6։ Սակայն մարդուս մարմնու մէջը էնպիսի կարևոր գործարաններ էլ կան, որ արդէն առանց էդ գործարանների մարդս չի կարող ապրիլ։ Էդ կարևոր գործարանները մարդուս մարմնու մէջը ծածկված են և Ներքին գործարաններ են կոչվում, արտաքին գործարաններիցը զանազանվելու համար, այսինքն, էն գործարաններիցը՝ որոնք դրսևից երևում են։

---

1։ Մարդուս համար արտաքին հինգ զգայարանքներիցը ամենակարևորը տեսանելիքն է։ Աչքերը դասաւորված են ճակատի ներքևը, առանձին փոսերում, որոնք Ակաւառակ են կոչվում։ Մենք դրսևիցը միայն աչքի արտաքին մասն ենք տեսնում։

2։ Աչքի մէջը մենք նշմարում ենք մի բոլորակ սև Բիբ և բբի շուրջը—մի գունաւոր բոլորակ, որը Ծիածան է կոչվում։ Զանազան մարդկանց աչքի ծիածանը զանազան գոյնի է լինում։ Ծիածանի շուրջը մենք նշմարում ենք աչքի սպիտակուցը, որը ճուի ձև ունի, բայց աչքի անկիւններում կարմրագոյն մանրաթելեր կան։ Աչքը երկու Կոպերով է խփվում։ Ներքին կոպը անշարժ է, իսկ վերին կոպը անդադար բարձրուցածր է անում—Թարթափում է։ Կոպերի ափերում դուրս են եկած Թերթերունքեր, աչքերի վերևը գտնվում են Ունքեր։

---

Ականջները, ինչպէս և աչքերը, Զուխտակ գործի են։ Մենք միայն ականջի արտաքին մասն ենք տեսնում, իսկ նրա ներքին մասը գլխի միջումն է։ Ականջի արտաքին մասը շօշափելով, մենք զգում ենք, որ նրա մէջը մորթու տակին մի բան կայ, որը մեիցը աւելի պինդ է, իսկ ոսկորիցը աւելի փափուկ. սա—Ղրղնճուկ կամ թէ Աճառն է։ Ականջի մէջը մի

ճեղք, Խողովակ այ, որը դէպ 'ի լսելիքի գործարանի ներքին մասն է գնում և կառափի քունք կոչված ոսկորի մէջն է ծածկվում։

---

Ռինթն է—միայնակ գործի և դէմքի մէջ տեղն է դրված։ Ռինթը մի քանի մասեր ունի. արմատ, որը աչքերի մէջ տեղն է գանվում, քնթի վերի մասը, քնթի ծայրը և երկու ոտունդներ և կամ թէ ինչպէս որ ասումեն երկու քնթի ծակեր։ Ռնթի վերին մասը—պինդ ոսկոռ է, իսկ ներքին մասը—ղրղնճուկից է բաղկացած։ Ռինթը միջի կողմիցը լոր-ձիւնոտ թաղանթով կամ թէ մաշկով է պատած։ Ռնթով մենք զանազանումենք հոտը, և քնթով մենք աւելի շատ ենք շունչ քաշում—քան թէ բերանով։

1։ Բերանը մի խիստ բարդեալ գործի է։ Նա դրսևիցը ծածկված է երկու փափուկ և կարմիր շրթունքներով։ Բերանի մէջը մենք նշմարումենք Ծամելիքներ, Լնդեր, Ատամներ, Լեզու, Կոկորդ և Որկոր։

2։ Բերանիցը մարմնու ներսի կողմը երկու խողովակ են գնում. էն խողովակը, որով մենք շնչառնում ենք, և որը անցնումէ պարանոցի առաջին մասովը, Շնչափող է կոչվում, միւս խողովակը շնչափողի ետևն է և Որկոր է կոչվում։ Շնչափողի վերին մասնումն է Ձայնի գործին։

---

1։ Իւրաքանչիւր ատամ երկու մասն է բաժանվում. վերին մասը—Թագիկ է կոչվում, իսկ ներքին մասը—Արմատ։ Ատամը դրսևիցը ծածկված է մի հարթ և փայլուն սաղափով։ Մարդս առանց ատամների է ծնվում, բայց մի քանի ամսից յետոյ մանկան ատամները սկսումեն մինը միւսի ետևից դուրս գալ, էդ առաջին ատամները Կաթնատամներ են կոչվում։ Յօթը կամ ութը տարուց յետոյ կաթնատամները թափվումեն և նրանց տեղը Մնայուն ատամներ են դուրս գալիս։

2։ Ատամները զանազան ձև ունին, նայելով թէ նրանք

ոՐ տեղ են դուրս եկած։ Երկու ծամելիքների, իւրաքանչիւրի վերայ առաջի կողմումը դուրս են եկած չորս չորս տափակ և սուր ատամներ (բոլորը միասին 8) և էդ պատճառով Առաջնատամներ են կոչվում։ Էդ առաջնատամները դանակի պէս կերակուրը կամ թէ ուտելու բանը կտրելու համար են։ Առաջնատամներից յետոյ երկու ծամելիքների երկու կողմումն էլ դուրս են եկած մի մի երկայն և սուր ատամներ։ Էդ ատամները Ժանիք են կոչվում։ Ժանիքները կերակուրը կամ թէ ուտելու բանը պատառ պատառ անելու համար են. բոլորը միասին 4 հատ են։ Սրանցից յետոյ դասաւորված են հարթ թագիկներով հաստ ատամներ, որոնց վերայ կոշտեր են երեւում, էդ հարթ ատամները Սողնակներ կամ թէ Աղեղնատամներ են կոչվում։ Սողնակներովը մենք մանրումենք կերակուրը։ Մարդս 32 ատամ ունի։

---

1։ Բերանն է — մի խիստ բարդեալ գործի, բայց էդ պատճառով էլ նա մի քանի պաշտօն է կատարում. մենք բերանով համ ուտում ենք, համ խօսում ենք և համել շրնչառնում ենք։

2։ Զանազան տառեր հնչելու համար մասնակից են լինում բերանի բոլոր մասերը նաև քիթը։ Զորօրինակ, Ե տառը մենք կարող ենք հնչել միայն կոկորդով, Բ կամ Պ, կամ Փ տառերը հնչելու համար, մենք պէտք է որ գործածենք մեր շրթունքները, Ռ և Վ հնչելու համար ներքևի շուրթը վերևի ատամներին ենք կպցնում, Կ տառը հնչելու համար մեր լեզուն կպցնում ենք մեր քմքին, Դ կամ Տ կամ Թ տառը հնչում են լեզուն և ատամները 'ի միասին, իսկ Ն հնչելուն մասնակից է և քիթը։

---

1։ Իմ ամբողջ մարմինը դրսևից պատած է մորթով։ Ինչ որ մարմնուս դիպչում է, ես զգում եմ, էդ պատճառով և մորթին անվանվում է շօշափելիքի գործի։

2։ Ըստ մեծի մասին չորքոտանիների մորթին բրթով ծած-

կրված է, մարդուս մորթին լերկ է և հարթ, բայց մանրիկ մանրիկ տալով նրա վերայ մենք կտեսնենք փոքրիկ կէտեր. էդ— մի փոքրիկ խողովակներ են, որոնք ասվումեն Ծակոտկէնք, որոնցով անցնումէ մորթու արտաշնչութիւնը։ Գլխի վերի մասի մորթու վերայ երկայն և զալին մազեր են դուրս գալիս։

Բոլոր մորթու վերայ նոյնպէս սփռված են փոքր և սպիտակագոյն մազեր, բայց նոքա այնպէս սակաւ են և փոքր, որ հազիւ են տեսնվումէ։

1։ Շօշափելով իմ մարմնուս մասերը, ես զգումեմ, որ մորթու տակին մի կոշտ բան կայ—սա է Ոսկորը։ Ընտաքուստ, շօշափելով, ես միայն կարող եմ զանազանել ամենագլխաւոր և ամենամեծ ոսկորները։

2։ Գլխին ձեռք տալով, ես շօշափումեմ Կառափը։ Կառափը բաղկացած է մի քանի կորնթարդ ոսկորներից, որոնք նման են կճուճի (քօթանի) կտորներին, և ղրաղներով միաւորված են։ Կառափի բոլոր ոսկերոտիքը կազմումեն մի գընտանման ոսկոռեայ արկղիկ, որի մէջը գանվումէ մի ամենակարևոր և ամենաքնքոյշ գործի—Ուղեղ։

3։ Գլխումն ես դարձեալ շօշափումեմ երկու ծամելիք Վերին և Ներքին։ Վերին ծամելին էնպէս է կպած կառափի հետ, որ միայն նրա հետ կարող է շարժվել, այլ ինքն ըստ ինքեան անշարժական է։ Ներքին ծամելին առանց կառափի շարժվումէ, որովհետև նրա հետ չէ միաւորված, այլ նրա հետ մի առանձին ամուր և դիւրաձիգ կապերով ամրացած է։ Ես կարող եմ նրան թոյլ թողնել, վեր քաշել, մի կողմից միւս կողմը շարժել, որով կարողանումեմ բանալ և փակել բերանս, խօսել և ծամել։

Զուխտ ծամելիքների վերայ ամրացած են Ատամները։

1։ Գլուխը ոչ թէ փափուկ պարանոցի վերայ է ամրացած, այլ ողնաշարի վերայ, որը որ ծործորակիցը սկսած գընումէ պարանոցովը մէջքն 'ի վեր մինչև Ոնի ծայրը։

Ողնաշարը կազմված է 33 փոքր ոսկոռներից, որոնք Ող-

ներ են անուանվում և որոնք մինը միւսի ետևիցը շարված են և էս պատճառով բոլոր ողները միասին կոչվում են Ողնաշար։

2։ Այդ ողները, որոնց քսան մեծի մասին կարելի է ձեռներով շօշափել, միմեանց վերայ են դնվում և գիւրաձիգ կապերով միմեանց հետ ամուր կապված են։ Ողների մէջը փուչ է, և բոլորը միասին մի երկայն խողովակ են կազմում, որը կառափի նման ուղեղով լեքն է։ Մէջքի ուղեղը միանում է գլխի ուղեղի հետ։ Եթէ ողնաշարը մի պինդ սաղ ոսկորից լինէր, էն ժամանակը մարդս չէր կարող ոչ կռանալ, ոչ պարկիլ, և ոչ Ռնի մի կողմի վերայ խոնարհիլ, չէր կարող իրան պարանոցը ծռմռել և ոչ էլ գլուխը շարժել։

3։ Ողնաշարն է Ռնի գլխաւոր և միջին ոսկորը։ Նրա վերայ են ամրացած միւս ինացեալ ոսկորները. վերին մասի վերայ ամրացած են — Կողքերը և նրա վերայ ձեռների ոսկորները։ Ներքևինի վերայ — մեծ և ամուր Հէքի ոսկորները, որոնց վերայ և ամրացած են ոտների ոսկորները։

4։ Կողքերի ոսկորները ողնաշարիցը սկսած, սաստիկ կռանում են երկու կողմի վերայ և կազմում են կրծքի հիմքը, կամ կրծքի վանդակը, որտեղ տրփտրփում է սիրտը և ուր զբաղվում են թոքերը, որոնցով մենք շունչ ենք քաշում։ Մարդուս կողքերի բոլոր ոսկորները 12 ջուխտ կամ թէ զոյգ են։ Վերին եօթը ջուխտը ծայրերով միմեանց հետ միանում են և կազմում են կրծքի տափակ և երկար ոսկորը, որին ես կարող եմ ձեռքով շօշափել։

Կողքերի հինգ ջուխտը ծայրերով միմեանց հետ չեն միանում և կոչվում են Խաբերայ կողքեր։

5։ Ողնաշարի ներքին մասի հետ կպած են Հէքի երեք ոսկորները, որոնք միմեանց հետ միանալով բաղկացնում են մի պինդ և մեծ ոսկոր, որը կոչվում է Այրի (շեք)։ Այդ ոսկորի վերայ է հաստատված ողջ Ռունը և որի վերայ ամրացած են ոտի ոսկորները։

1։ Կրծքի վանդակի հետ միացած են իւրաքանչիւր ձեռի ոսկոռները երկու ոսկոռների միջնորդութիւնով. Թիակի և Ուլի։ Թիակն է մի լայն, եռանկիւնի և տափակ ոսկոռ, որը գտնվումէ կողքերի ետևից մէջքի վերայ։ Ուլն է— մի փոքր, նուրբ և կեռացած ոսկոռ, որը ուսիցը գնումէ դէպ 'ի կրծքի ոսկոռի վերևը։

2։ Ձեռի վերին մասումը գտնվումէ մի հաստ ոսկոռ, որը կոչվումէ Ուս, ձեռի միջին մասումը երկու ոսկոռներ կան, մինը փոքր ինչ հաստ է—Արմունկ, իսկ միւսը փոքր ինչ բարակ Ձեռը։

3։ Դաստակի մէջը շատ ոսկոռներ կան, որոնք բաղկացնումեն մաջէն կամ թէ խլալենքը, ձեռի ափի ոսկոռները և մատները։ Մաջէն դաստակը միացնումէ արմնկի մի մասի հետ, ձեռի ափի ոսկոռներիցն է բաղկանում ձեռի ափը, մատների ոսկոռները միանումեն դաստակի հետ։

1։ Ոտի վերին մասումը մի հաստ և երկար ոսկոռ կայ, ասվումէ Ազդր (փաչայ) միջին մասումը երկու ոսկոռներ կան. մեծ ոլոդի ոսկոռ և փոքր ոլոդի ոսկոռ։ Ծնկան մէջը մի փոքր ոսկոռ էլ կայ, որ բաժակի նման է և ասվումէ ծնկան խուփ։

2։ Ներբանի մէջը շատ ոսկոռներ կան։ Ներբանի ոսկոռները, ինչպէս և դաստակի ոսկոռները, երեք մասն են բաժանվում. պճեղների յետի կողմ, պճեղներ և մատների ոսկոռներ։

Պճեղների յետին կողմումն հաստատուած են ոլոդները, պճեղներիցն է բաղկանում ներբանը և այդ պճեղների վերայ են ամրացած մատների ոսկոռները։ Բոլոր առանձին առանձին ոսկոռները միմեանց հետ պինդ և առաձգական կապերով միացած են և բաղկացնումեն Կմախքը։ Կմախքն է մարդուս մարմնու հիմքը, որի վերայ և մարմինը հաստատված է։

1։ Մեր մարմնու մասերը շօշափելով, մենք զգումենք,

որ նրանց մէջը ոսկորները ծածկված են մի փափուկ, բայց առաձգական բանով, էդ է միսը կամ Մկանունները։ Մկանունները առաձգական են, ինչպէս խէժը, և կարող են կուչ գալ, սեղմվել, կամ կարճանալ և երկարանալ, որով մենք կարողանում ենք մեր մարմնու մասերը շարժել։ Էդպէս, զորօրինակ, ձեռի ուսային մասը մկանունների միջնորդութիւնով միանում է արմունկի հետ, երբ էդ մկանունները կուչ են գալիս, էն ժամանակը մեր ձեռը թեքվում է և կռանում, երբ երկարանում են, կամ ձգվում են, էն ժամանակը մեր ձեռը դզվում է։

2։ Մարդուս մարմնու մէջը շատ փոքր և մեծ մկանուններ կան. դէմքի ամենափոքր շարժողութիւնը առանձին առանձին մկանունների կարճանալուցը և ձգվելուցն է լինում։ Մեր լեզուն էլ մի շատ մեծ և շատ փափուկ մկանուն է։

3։ Մկանունները աշխատելուցը և բան անելուցը պնդանում են։ Ով շատ է ման գալիս, նրա ոտների մկանունները էլ պնդանում են, ամրանում են և զօրեղանում, ով ձեռներով շատ է աշխատում, և շատ է բան շինում, նրա ձեռների մկանունները պնդանում են և զօրեղանում։ Ոտքերի մկանունները դանդաղ են, թոյլ և շուտով դադարող։

4։ Մկանունները ոսկորների հետ միանում են Ջոր երակներով. նրա համար են էդ երակները չոր կոչվում, որ դրանք կարողանան ղանաղանվիլ էն փափուկ երակներից, որոնց միջովը արիւնն է գնում։

1։ Բայց մկանունները իրանց կամքովը չեն կարճանում, ձգվում, և մեր մարմինը շարժում. մարդս երբ կամենում է թեքվի պէս բարակ Ջղերով կուչ է ածում և երկարացնում է մկանունները։ Էդ ջղերը մարդուս մարմնու իւրաքանչիւր մասի մէջն էլ գտնվում են, որոնք զգալու և զրդռելու յատկութիւն ունին։

2։ Ջղերը տարածվում են բոլոր մարմնու մէջը, բայց ուղեղից են յառաջ գալիս և կռատի և ողնաշարի մէջը

գտնված ճեղքիցն են դուրս գալիս։ Ուղեղիցը աչքերի մոտ եկող ջղերը կոչվումեն Տեսանելիքի ջղեր, լսելիքի գործու մոտ եկող ջղերը, Լսելիքի ջղեր և այլն։ Մկանունների մէջը գտնուող և նոցա կարճանալ և ձգվել հարկադրող ջղերը կոչվումեն Շարժման ջղեր, որովհետև մարդս նրանց միջնորդութիւնով է շարժում իրան մարմնու բոլոր մասերը։

3։ Եթէ որ ուղեղիցը աչքերի մոտ եկող ջղերը խանգարվին և ներգործելուցը դադարվին, էն ժամանակ մարդս էլի ոչինչ չի կարող տեսնել, թէ և նրա աչքերը առաջուայ նըման սաղ և նայում լինեն։ Եթէ որ ողնաշարի ուղեղիցը յառաջ եկած էն ջղերը, որոնք գնումեն ոտների մկանունների մէջը, խանգարվին և չը ներգործեն, էն ժամանակը մարդս էլ մանգալ չի կարող, թէ և էդ ոտները տեսութիւնով բոլորովին առողջ թվին։ Բայց եթէ խանգարվի և ներգործելուցը դադարի հէնց ուղեղն ինքը, որիցը յառաջանումեն ջղերը և տարածվումեն բոլոր մարմնու մէջը, էն ժամանակը մարդս ոչ զգալ կարող է և ոչ շարժվել։ Ահա՛ թէ ընչո՞ւ համար է ստեղծողը էդ պիտանի և քնքոյշ գործին կառափի և ողնաշարի ամուր ոսկոռների մէջը դրել։

---

1։ Եթէ մեր մորթին մի տեղից կտրենք, էն ժամանակը նրանից դուրս կգայ մի հեղուկ և կարմիր տաք արիւն։ Արիւնը մարդուս մարմնու միջովը անցնումէ փափուկ և երբեմն շատ բարակ խողովակներով, որոնք կոչվումեն Երակներ։ Էն երակները, որոնք բաւականի հաստ են և անցնումեն մորթու տակովը, կարելի է մորթու տակիցը տեսնել։ Ձեռի, պարանոցի և քունքերի ընչերակին շոշափելով, մենք զգումենք, որ մորթու տակին մի բան տրփտրփումէ, էդ երակն է, որ կուչ է գալիս և ձգվումէ, որով տաք արիւն է վազում։

2։ Նայելով ձեռքի վերայ, մենք տեսնումենք, թէ մորթու տակին երակները ծառի ճիւղերի նման ինչպէս տարածվումեն։ Բայց ամենաբարակ երակները մենք մորթու դըբ-

սևիցը չենք կարող տեսնել։ Նրանք ոչ միայն մկանունների արանքներովն են անցնում, այլ մկանունների մէջն էլ են մըտնում, որիցը միսը կարմիր գոյն է ստանում։

Մեր թշերի (այտ) և շրթունքների կարմիր գոյնն էլ կախված է էն արիւնով լիքը երակներիցը, որոնք անցնում են մեր մորթու տակովը։ Եթէ մի ձեռին միւս ձեռով բաւականի ամուր խփենք, էն ժամանակը կնկատենք, որ էն տեղը, ուր մենք խփեցինք, առաջ կսպիտակի, իսկ յետոյ կը կարմրի։ Էդ նրանից է կախված, որ առաջ արիւնը էդ տեղիցը հեռանում է, իսկ յետոյ մեծ քանակութիւնով էդ տեղ է թափվում։

3։ Երակները, ինչպէս անթիւ ճիւղեր, տարածվում են բոլոր մարմնու մէջը, բայց էդ բոլոր երակները ժողովվում են սրտի մօտ, որը գտնվում է կրծքի ձախ կողմումը կողքերի ոսկոռների տակին և անդադար տրփտրփում է, այսինքն կուչ է գալիս և ձգվում փքվում է։ Երբ որ սիրտը ձգվում փքվում է, էն ժամանակը արիւնը նրա մէջն է թափվում, իսկ երբ սիրտը կուչ ու հուփ է գալիս, էն ժամանակը երակների մէջն է քշում արիւնը։

---

1։ Իմ կեանքի, նոյնպէս և բոլոր ուրիշ մարդկանց կեանքի համար, անշուշտ հարկաւոր են կերակուր և ըմպելիք։ Առանց կերակուրի և ըմպելիքի ես կարող եմ մեռնել սովիցը և ծարաւութիւնիցը։ Երբ ես քիչ եմ ուտում, էն ժամանակը իմանում եմ անախորժելի սովի ազդեցութիւնը, և բոլոր անդամներս դադարում են և թուլանում, բայց երբ մի կուշտ ուտում եմ, էն ժամանակ զուարթանում են և զօրեղանում։

2։ Ես կերակուրը բերանս եմ դնում, նրան ատամներովս մի լաւ ծամում եմ, թքով թրջում եմ և կուլ եմ տալիս։ Կուլ տուած կերակուրը կոկորդովս և որկորովս ստամոքսիս մէջն է գնում, որը Ինի ներքին մասումն է գտնվում։

3։ Ստամոքսը մարսում է կերակուրը, այսինքն կերակու-

րիցը արիւն է շինում էն մասերը, ինչ որ կարելի է շինել, իսկ մնացած անպիտան մասը ի բաց է գնում։ Ընդ արիւնը երակներովը սրտի մէջն է թափվում, յետոյ սրտիցը ուրիշ երակներով թոքերի մէջն է անցնում։

4։ Թոքերը սրտի պէս մի գործի են, որոնք կրծքի տակին են գտնվում։—Նրդ մեծ և փափուկ գործին բաղկանում է միմեանց հետ միացած անթիւ փոքրիկ խողովակներից։ Թոքերովը մենք շնչառնում ենք, այսինքն, օդը ծծում ենք և բաց թողնում։ Օդը շնչափողովը, քնթովը և բերանովը թոքերի մէջն է մտնում և դուրս է գալիս։ Երբ մենք ծծում ենք օդը, էն ժամանակը մեր թոքերը փքվում են և կուրծքը բարձրանում է, երբ մենք բաց ենք թողնում օդը, էն ժամանակը մեր թոքերը կուչ են գալիս և կուրծքը վերէ նստում։ Շնչառութեան համար անշուշտ հարկաւոր է օդը և առանց օդի մարդս աւելի շուտ կմեռնի, քան թէ առանց կերակրի։

5։ Արիւնը թոքերի միջովը անցկենալով և մտենալով օդին, կարմրանում է։ Արիւնը թոքերիցը կրկին թափվում է սրտի մէջը, իսկ սիրտը ձգվելով, փքվելով և կուչ գալով, տարածում է էդ արիւնը բոլոր մարմնու մէջ, որը արիւնով է սնվում։

---

Ոսկորները, որոնք մի առաձգական կապերով միմեանց հետ միացած են, մկանունները, որոնք չոր երակներով ոսկորների հետ կպած են, արիւնով լեցը երակները և ջղերը—էդ ամենը դրսի կողմիցը Մորթով ծածկված են։ Մարմնու մէջն էլ գտնվում են մի քանի ամենահարկաւոր առանձին առանձին գործիներ, որոնցից մենք միայն ամենագլխաւորները գիտենք. Ուղեղը—կառափի և ողնաշարի միջումը, Սիրտը և Թոքերը—կուրծքի տակին և Ստամոքսը—փորի մէջը։

---

1։ Էս հմի երբ լինձ ուրիշ մեծ և հնասակաւոր մարդկերանց հետ համեմատում եմ տեսնում եմ դեռ շատ մեծ չեմ

և ոչ էլ շատ զօրեղ, բայց առաջ աւելի փոքր էի և աւելի թոյլ, մինչև անգամ, ինչպէս ասում են, ես, չէի կարողանում մանգալ և խօսալ, թէ և իմ միտս չի թէ էդ ե՞րբ էր։

2։ Անցնի էլի մի քանի տարի, ես հասակ կառնեմ, մեծ և զօրեղ կլինեմ, հասակաւոր մարդ կդառնամ, կանցնի էլի մի երեսուն տարի—և ես կսկսիմ ծերանալ։ իմ զօրութիւններս կսկսեն պակասիլ, դէմքս կսկսի կնճիռներով ծածկվել, աչքերիս լոյսը պակասել, առամներս թափվել—ես կը-ծերանամ։ Յետոյ ես կմեռնիմ, մարմինս էլ չի դդալ և էլ չի շարժիլ, կսկսի շորանալ և հող դառնալ, որից նա ստեղծված է, բայց իմ հոգիս երբէք չի մեռնիլ, որովհետև էն Աստուածը, որը ինձ մի մահկանացու մարմին է տուել, նա տուել է ինձ և մի անմահ հոգի։

3։ Բայց հմի իմ մարմինս ապրում է, սնդվում է և աճում, զդում է և շարժվում, որովհետև նրան կեանք է պարգևած։

1։ Այս հասկանում եմ էն, ինչ որ ինձ ասում են, կարողեմ խօսքերով արտայայտել իմ մտքերս և ցանկութիւններս, էնպէս որ ուրիշ մարդիքը իմ ասածներս հասկանան. ես ունիմ խօսելու կարողութիւն։

2։ Եթէ ես մի բան տեսնում եմ կամ թէ ուշադրութիւնով լսում եմ, էն ժամանակը կարող եմ, երբ կամենամ, մտաբերել էն, ինչ որ տեսել եմ և լսել։

Այս կարող եմ սովորել դասը և յետոյ մտաբերել և պատմել էն, ինչ որ սովորել եմ, կարող եմ միտս բերել ծանօթ մարդկանց դէմքերը և անունները, կարող եմ միտս բերել շատ առարկաների անունները. ես ունիմ Յիշողութիւն։

3։ Այս ինձ շատ կենդանի երևակայում եմ, թէ ի՞նչ բաւական անութիւններ պէտք է ունենամ, երբ ամառն դայ, ես ձևակերպում եմ, թէ ինչպէս պէտք է գլօանիմ, մրգեր ժողովիմ, ձկներ որսամ և բնիկներիս հետ խաղամ։ Այս նոյնպէս շատ կենդանի կարող եմ ինձ երևակայել ծանօթ մարդ-

կանց դէմքը։ Գիշերը ես շատ անգամ երազներ եմ տեսնում և տեսնում եմ էն, ինչ որ իսկապէս չը կայ. ես ունիմ Դրևակայութիւն։

4։ Ինչ որ ինձ ասում են և ինչ որ ես գրքի մէջը կարդում եմ, բոլորը միտս չեմ պահում, բայց երբ ինձ պարզ պատմում են և ես պատմածը ուշադրութիւնով լսում եմ, էն ժամանակը ինչ որ ես առաջ չէի հասկանում այժմ հասկանում եմ։ Դս այժմ քիչ գիտեմ, բայց առաջ աւելի քիչ գիտէի, իսկ ինչքան շատ կարդամ, էնքան շատ կիմանամ և կհասկանամ։ Դս շատ անգամ առանց միտքը հասկանալու բան եմ անգիր արել, բայց եթէ ինձ համար պատմել են, էն ժամանակը ես ինչ որ առաջ չէի հասկանում սկսել եմ հասկանալ. ես Խելք ունիմ։

1։ Ինձ դուրեկան է, երբ ինձ գովում են, և անուախորժելի է, երբ ինձ պարսաւում են, ես սիրում եմ իմ ծնողներս, սիրում եմ իմ ընկերներիցս շատերին։ Երբ ինձ բարեբարութիւն են անում կամ մի բաւականութիւն են տալիս, էն ժամանակ ես մի գոհութիւն եմ զգում։ Երբ ինձ ջգրացնում են, ես բարկանում եմ, երբ ես ուրախ եմ լինում, ծիծաղում եմ, երբ ես տխուր եմ, լաց եմ լինում. ես շատ ներքին հոգեկան զգայարաններ ունիմ։

2։ Երբ ես իմ դասը սովրում եմ, իմ պաշտօնը կատարում եմ, երբ ես ոչ մի չարութիւն արած չեմ լինում, էն ժամանակը իմ հոգիս խաղաղ է, թեթև և պայծառ, երբ ես ծոյլանում եմ, կամ հուջաթ ու անհնազանդ եմ լինում, կամ չարութիւն եմ անում, էն ժամանակը իմ հոգիս անհանգիստ է լինում և շնորհակալ չի իմ վարմունքներիցը. ես Խիղճ ունիմ։

3։ Երբեմն ես չեմ կամենում կարդալ և սովրել, բայց ես կարող եմ ինձ հարկադրել, մի գործով պարապել, գիտենալով, որ պէտք է աշխատիլ և ամօթ է ծոյլանալ։ Երբեմն ինչ որ ինձ հրամայում են՝ ես չեմ կամենում կատարել, բայց ես կարող եմ ինձ հարկադրել կատարել ծնողներիս կամ ուսուցիչ-

ներիս կամքը, գիտենալով, թէ ես պէտք է նրանց հնազանդվիմ և թէ նրանք ինձ համար բարի են ցանկանում։ Երբեմն ես էնպիսի բաներ եմ ցանկանում որ չարժէն, բայց ես կարող եմ ինձ հարկադրել էն բանը կատարել, ինչ որ արժան է. ես Կամք ունիմ։

---

1։ Աստ չեմ տեսել և չեմ կարող տեսնել Աստուծուն, որովհետև նա հոգի է, բայց հաւատում եմ, որ նա կայ, տեսնում է բոլորը, գիտէ բոլորը, և կառավարում է բոլորովքն, մեզ սիրում է և մեզ համար բարութիւն է ցանկանում. իմ հոգու մէջը կայ հաւատ առ Աստուած։

2։ Աստ երբեմն չարութիւն եմ անում, երբեմն ծոյլանում եմ, երբեմն բարկանում եմ, երբեմն չեմ հնազանդվում, երբեմն մի յիմար բան եմ անում կամ ասում, պատահում է որ սուտ եմ խօսում, բայց ես ցանկութիւն ունիմ խելօք լինել. շատ բան գիտենալ, ունկնդիր լինել, ճշմարիտ և բարի մարդ լինել, և ես կարող եմ լինել էդպէս, եթէ աշխատիմ. ես ցանկութիւն ունիմ և կարող եմ ամենախելօք և ամենաբարի մարդ լինել։

1։ Էդ բոլոր կարողութիւնները խօսելու կարողութիւնը, յիշողութիւնը, երևակայութիւնը, խելքը, ներքին զգայարանքները, խիղճը, կամքը, հաւատը առ Աստուած, ամենալաւ լինելու ցանկութիւնը և կարողութիւնը—կոչվում են հոգեկան յատկութիւններ։

2։ Մարդուս մարմնու մէջը մի անտեսանելի հոգի է բնակվում, առանց որի մարմինը մեռած կը լինի, չի կարող զգալ, չի կարող շարժվել, չը նայելով իրան բոլոր գեղեցիկ կարգաւորված գործարաններին։ Մարդուս հոգին շատ յատկութիւններ ունի, որոնցից մի քանիսը և կենդանիներն էլ ունին։ Բայց կենդանիները խօսելու կարողութիւն չունին, չունին խելք, չունին խիղճ, չունին կամքի ազատութիւն, նրանք չեն կարող Աստուծու վերայ հասկացողութիւն ունենալ, չունին ամենալաւ լինելու ցանկութիւն և կարողութիւն։

Ստեղծողը մարդուս տուել է մի գեղեցիկ — կարգաւորված մարմին, տուել է կեանք, տուել է ազատ, բանաւոր, անմահ, բարութիւն ցանկացող և Տիեզերքի Արարչին հաւատացող մի հոգի։

## ՀԱՏՈՒԱԾ II։

## ԶՈՐՔՈՏԱՆԻՆԵՐ։

### ԶԻ։

Մեր ընտանի ամենագեղեցիկ և ամենամեծ կենդանիներիցը մէկն էլ ձին է։ Ձիու գլուխը երկայն է և գեղեցիկ, պարանոցը դիւրաթեք. կուրծքը լայն, Ոտները երկայն և հորս ոտներն էլ երկայն են և բարակ, իսկ իւրաքանչիւր ոտի վերայ մի մի պինդ Պնդակ (սմբակ)։ Ձիու բոլոր մարմինը կարճ, թանձր և պատպան մազով ծածկված է։ Ձին իրան պարանոցի վերայ երկայն Խաշ (եալ) ունի, ականջների արանքումը, ճակատի վերայ մի մազէ Փունջ է գտնվում, ոտների երեսին, կոճերի վերայ կոշտ մազեր են դուրս եկած, իսկ ձիու ետի կողմումը գտնվում է մի գեղեցիկ և երկայն Պոչ։ Էնց պոչի սկզբիցն են մազերը սկսվում երկայնանալ։ Ձիանը զանազան գոյնի են լինում. սև, շէկ, կապոյտ, նարնջի, սպիտակ և չալ։ Ձիու աչքերը մեծ մեծ են, երկայն ձև ունին և էնպէս են նայում, որ կարծես թէ մի բան են հասկանում։ Նրա երկու երկայն ականջները դիք ցցված են։ Ներանը երկայն է և իւրաքանչիւր ծամելիքի վերայ գտնվում են երեք տեսակ ատամներ. Առաջնատամներ, Ժանիքներ և Սողնակներ։ Եթէ որ ձիու ետի ոտը մարդուս ոտի հետ համեմատելու լինենք, կը տեսնենք, որ ձիու ոտը կարծես թէ միայն երկու մասից բաղկանալիս լինի և ծունկը մերի նման, ոչ թէ առաջի կողմի վերայ, այլ ետի կողմի վերայ է ծալվում։ Իսկ եթէ ձիու կմախքի վերայ նայենք, մենք կտեսնենք, որ նրա ոտը երեք մասից է բաղկացած, բայց Աղդրը Ոտի հետ էնպէս է միացած, որ առաջին հայացքից չես կարող ջոկել։ — Հարունակեսցի։

# ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻ

## ՆՈՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ ՄԸ*

---

,,Մանդուսի էֆքեար" տաձկալեզու լրագրոյն Դպր. 9-էն և 29 թուով հրատարակած թերթին մէջ հետևեալը կարդացինք, զոր ասկէց առաջ չի կրցանք մեր ընթերցողաց հաղորդել, աւելի կարևոր բաներ ունենալնուս համար։

,,Այս շաբթու Խարիզու լրագրոց մէջ զարմանալի բան մը կարդացուած է։

,,Մոնթոպանի եպիսկոպոսը՝ քահանայներուն Լը-Մոնտանուն լրագրոյն նամակ մը խրկելով, առաջուց մեզն է յիշուած Աստուածաշունչի թարգմանչաց մասնաժողովին համար ամբաստանութիւն ըրեր է։

,,Յայտնի է որ յիշեալ Յանձնաժողովը 40 իմաստուն մարդոցմէ բաղկացեալ է. մէջերնին այլ և այլ ազգէ և կրօնքէ մարդիկ կան. եկեղեցական, և հրէայ անդամ կը գտնուին. և ասոնք Աստուածաշունչ սուրբ գիրքը նորէն Եբրայականէն Գաղղերէնի պիտի թարգմանեն։

,,Յիշեալ եպիսկոպոսն այս մասնաժողովոյն և այս գիտաւորութեան համար կրակ կտրելով կըսէ. ,,ի՞նչ ըսելէ այս, սուրբ գրոց ալ ձեռք կդարնեն, որուն պահպանութիւնը և

---

* Կոստանդնուպոլսից ստացանք մօտ օրերս մի յօդուած հանած ,,ԵՐԵՒԱԿ" պատուական լրագրից թիւ 154 Մայիսի 8 այս տարի, զոր հարկաւոր ենք համարում հրատարակել։ Ծան. Տրատակ.

քարոզութիւնը և ընթերցումը մեզի յանձնուած է, երբ մեզնէ (դաթօլիկ վարդապետներէն) զատ մէկ մը խառնուելու իրաւունք և իշխանութիւն չունի անոր թարգմանութեանը, ՝ըրէայներն անգամ խառնուելու ելեր են. և 'ի պաշտօնէ ալ թոյլտուութիւն եղեր է՝՝. և ասոր նման շատ աղաղակ փրցուցեր է։

,,Մոնթոպանի եպիսկոպոսին խելքովը, թէ որ հին թարգմանութեան մէջ վրիպակ և տարբերութիւն կենայ ալ նէ՝ դուրսէն մարդ չը խառնուելով մինակ իրենք խառնուելու են եղեր։

,,Շատ աղէկ. բայց վարդապետաց խումբէն զատ ուրիշները քննութեան և դիտողութեան իշխանութիւն չունին նէ՝ ի՞նչպէս կրնայ հասկրցուիլ թէ տարբերութիւն կամ սխալ կայ թէ չկայ, և արդեօք աշխարհականները խառնուած և ասանկ ըսած ատեններին մէջերնուն մէկ վարդապետ մը ասոր չէ թէ գործադրութեանն եղած, այլ միայն խօսքը բերանն եղած ժամանակը բանադրանաց շանթերու պատահիլը փորձուած չէ՞ մի՝՝։

,,Մանգուսի էֆքեարին՝՝ խմբագիրը այս ըսածներովը՝ մեր ասկէ առաջ ըսածնուս հաստատութիւն կուտայ. կրօնական կրթութիւն ըստ բաւականին առած չըլլալով իրեն չի հասկրցած և չի հասկնալու բանին մէջ կը նետուի, և միայն բողոքականներու բերանը վայելելու խօսքեր կը խօսի. առած տեղեկութիւնն ալ կամ Օրոնիօն նասիօնալ-էն կամ Սիէքլ-էն կամ ասոնց նման եկեղեցւոյ թշնամի լրագիրներուն մէկէն եղած ըլլալը անկէց յայտնի է՝ որ Լը-Մոնտ լրագիրը քահանայներու լրագիր կանուանէ, երբ այն լրագրոյն ոչ խմբագրապետը և ոչ սովորական խմբագիրները քահանայ չեն, երբեմն երբեմն եկեղեցական մը նամակ մը կամ բանասիրական մը խրկելու ըլլայ նէ կը հրատարակէ. և թէ որ այսպէս լրագիր մը քահանայներու յատուկ սեպուի նէ՝ նոյն իսկ վերոյիշեալ լրագրոյ մէջ ալ այդպիսի հատուածներ կրնան գտնուիլ։ Լը-Մոնտը կուզէ քահանայի լրագիր ըլլայ՝ կուզէ աշխարհականի, մեր հոգ ընելու բանը չէ. սա միայն իմաց-

նել կուզեմք թէ Մանգու�մէն Եւրոպայի կրօնական բանեռու մէջ կը մնանէ ի՞նչպէս լրագրերու կը հետեւի։

Բուն խնդրոյն, այսինքն՝ Աստուածաշունչ գրքին նոր թարգմանութեանը դալով ըսելիքնիս այն է՝ որ այդպիսի թարգմանութիւն մը խառն մանաւոդով մը ձեռնարկուած՝ ոչ կարեւորութիւն մը ունի, և ոչ ալ անկասկած կրնայ ըլլալ միայն գրագիտաց մէջ իբրև գրագիտութեան առարկայ մը կրնայ ընդունուիլ, և ոչ երբէք իբրև հաւատալեաց և բարոյականի յիշատակագիր մը։

Երդէն Տեառն մերոյ աշխարհ գալէն 273 տարի առաջ հին կտակարանը Եբրայական բնագրէն Յունարէնի թարգմանուած է. ինչպէս թարգմանուելուն պատմութիւնն ալ յայտնի է։ Պտղոմէոս եղբայրասէր մականուանեալ՝ Եգիպտոսի թագաւորը սուրբ գրոց ընտիր օրինակ մը և եօթանասուն և երկուք ալ կարդացող իրէայ բերել տուաւ, ասոնք վեց վեց հոգի զատելով զատ զատ սենեակներ դրաւ և սուրբ գիրքը այս կերպով թարգմանել տուաւ. մէկ սենեակին մէջ եղած թարգմանութեան բնագիրը միւս սենեկի մը տալով և նորէն անոնց ալ թարգմանել տալով. և ասով տասն և երկու զատ զատ թարգմանութիւն ունենալուն տեղը մի և նոյն թարգմանութիւնն ելաւ՝ թարգմանիչներն իրարու հետ խորհրդակցելու միջոց չունեցած. և ասիկայ է եօթանասնից ըսուած թարգմանութիւնը, որկէց թարգմանուած է իրէերէն ալ՝ հին վերսիօ իդալիքա ըսուած Լատին թարգմանութիւնն ալ։

Տեառն մերոյ աշխարհք գալէն և համբառնալէն ետքը շատ չանցաւ, Սիմմաքոս և Ակիւղաս և Թէոդորիտոս՝ երեքն ալ աղանդաւոր մարդիկ, եօթանասնից թարգմանութեանը չը հաւնելով, որովհետև իրենց աղանդոյն հերքումի կելլէր մէջէն. Եբրայական բնագրէն նորէն թարգմանելու ձեռք զարկին։ Այն ատենները էր Սուրբն Յուստինոս՝ թէպէտ հեթանոս ծնողաց զաւակ, բայց Պաղեստինու Սամարիա քաղաքը ծնած, և իր իմաստասէր բնաւորութեամբը իրէից

կրօնքին և լեզուին, և հետևաբար սուբ գրոց բնագրին աղէկ տեղեկացած։ Սիկայ Տրիփօն անուն Հրէայի մը հետ խօսակցութեան մէջ կը պնդէր՝ թէ Հրէայները իրենց սկզբնագիր Աստուածաշունչին մէջէն Տեառն մերոյ համար գտնուած մարգարէութիւնները խանդարեցին, բառ պակսեցուցին կամ աւելցուցին կամ ծուռ մեկնութեան ենթակայ ըրին. և ասով հօթանասնից թարգմանութեան հարազատութեանը պաշտպան կը կենար։

Սրբոյն Յուստինոսի բաժին ճշմարիտ ըլլալուն նշանները մինչև հիմայ կը տեսնուին։ Սաղմոսին մէջ Տեառն մերոյ խաչելութեան համար քաջածանօթ վիճայութիւն մը կայ. որ է այս. ,,ծակեցին զձեռս իմ և զոտս իմ,, (Սաղ. իա. 18) Ծակեցին բառին Եբրայական է Քեարու, որուն վերջին գիրն է վաւ։ Այս գրոյս երկար պոչը գմելի ծայրով քիչ մը քերելով և կարճեցնելով կըլլայ եօ. և ասով բառը կըլլայ քեարի. որ ըսել է՝ առիւծի պէս։ Հիմակուան Եբրայական Աստուածաշունչներուն մէջ վաւին պոչը կարուած է. և քեարի կը կարդան. որով սաղմոսին այս տունը իր սկզբնական նշանակութիւնը փոխուեր և եղեր է. ,,որպէս առիւծ զձեռս իմ և զոտս իմ,,։ Սակէց խելքի մօտ իմաստ մը չելլելը հոգ ըրած չեն*. բառական է ասոնց համար՝ որ Տեառն

* Հրէայները որպէս առիւծ ինքնահնար բառերնին նախընթաց տանը կուտան. և կը կարդան. ,,շուրջ եղեն զինև շունք բազումք. և ժողովք չարաց պաշարեցին զիս որպէս առիւծ,,։ Բայց ասով չի լըմընար յաջորդ տանը մէջ բայ մը պէտք է՝ որուն սեռի խնդիր ըլլան զձեռս իմ և զոտս իմ բառերը։ Թուեցին բայը այս պաշտօնիս չը գարվան զի անիկայ իրեն սեռի խնդիր ունի անանկ բառ մը՝ որուն որքանութիւնը գիտենալու համար համրել պէտք է. և այս է՝ զամենայն ոսկերս իմ. իսկ ձեռքերն ու ոտքերը երկերկու հատեն, և պակաս կամ աւելի ըլլան ալնէ մերկ աչքով կը տեսնուին։

մերոյ համար եղած մարգարէութիւններուն մէկը պակաս ըլլայ։ Հիմայ այս նոր մասնաժողովը՝ որուն մէջ Հրէայ ալ կայ եղեր, իր նոր թարգմանութեանը մէջ ծակեցի՞ն պիտի թարգմանէ, թէ որպէս առիւծ։

Առաջ հրէաներուն գրերը կէտանշան չունէին բաղաձայն գրերուն մէջ մտնելու ձայնաւորներն որոշելու համար. վասն զի մասնց գրերը բաղաձայն են. և ալէֆի և եօտի և վաւի ձայներն ալ՝ որոց վերջին երկուքը երբեմն իբրև ձայնաւոր կը բանին, անհաստատ են. ալէֆ-ը՝ որ միշտ ձայնաւոր է, երբեմն Ա գրոյ ձայն կը հանէ։ երբեմն Է-ի, և երբեմն Օ-ի։ Կէտանշան չեղած՝ կարդալուն կերպը աւանդութեամբ կը սորվէին։ Եւ քանի մասորա ընուած ձայնանիշ կէտերը հնարելենին զէշ բան չեղաւ. կարդալու հաստատ կերպ մը մնաւ։ բայց խարդախութեան ալ դրդիք մը եղաւ։ Ըսածնիս աղէկ հասկցնելու համար մեր գրերէն օրինակ տանք։ Անթաղրեմք բառ մը հր գրուած։ և աւանդութեամբ սորված ըլլանք որ անիկայ հար կարդալու է։ Այս աւանդութիւնս կրնայ մոռցուիլ կամ ասպակուսելի ըլլալ հարազատութեան կողմանէ. ձայնաւոր գրեր հնարելու պէտք մը կը լլայ և կը հնարուին։ Այն ատենը սեպենք թէ հար կարդալը մէկուն բանին չը գար, և մէջը Ա գիրը խօթելուն տեղը Ա կը դնէ, կը լլայ մատ. մէկ ուրիշը Ի կը դնէ. կը լլայ զոյն զոյն կերպաւոր հարուստ։ Երրորդ մը Ո կը դնէ; կը լլայ մէջը ջրով լեցուն կամ ոնջուր խորունկ տեղ. ատոր քով Ի մը դնելով՝ որով երկուքը ՈՒ մէկ ձայնաւորի մը տեղ կը բռնեն, կը լլայ կրնակ, իսկ թէ որ այս ձայնաւորներուն մէկն ալ չընդունիս և Օ դնես՝ հայր բառին սեռականը կը լլայ։ Առանկ տարբերուելի ընթերցուածոց մէջ՝ որոց միակերպ կարդացմունքը բուն գիրքը շինուելէն հարիւրաւոր և հազարաւոր տարի ետքը հաստատուած է, հարատաս ընթերցուածն ոչիր ըլլալը հասկնալու համար հին մեկնութիւններէն և հին թարգմանութիւններէն զատ ի՞նչ ճամբայ կայ. և այժմեան երրայական

ընթերցուածը ի՞նչ հեղինակութիւն կրնայ ունենալ. և հեղինակութիւն չունեցող և սուրբ գրոց խանդաբեալ բնագրէ մը նոր թարգմանութիւնն ինչի՞ օգուտ կրնէ։ Կամ իմաստը նախնի սուրբ հարց և վարդապետաց հասկցածին պիտի նմանցնես. և այնպէս թարգմանութիւն մը արդէն ունենալով նոր մ՚ալ շինելու ինչու աշխատուի. կամ հրէական մոլորութիւնները քրիստոնէից մէջ մտցընելու դիտաւոր մը ըլլայ. և ասիկայ խափանելու և առաջն առնելու ոչ թէ իրաւունք՝ այլ պարտականութիւն ունին եպիսկոպոսք։ Հրէից Աստուածաշունչին սխալները աւելի ընդարձակ ցրցուցած եմք Ռնութիւն կանոնի սուրբ գրոց մակագրով գրած գրքերնուս մէջ՝ որ տակաւին ձեռագիր է, պէտք եղած ատենը անկէց հատուածներ ալ կը հրատարակեմք։

Նոր թարգմանութեան անպիտանութիւնը և վնասը ըսածներէս կը հասկցուի։ Այսու ամենայնիւ՝ եկեղեցականք ո և իցէ մարդոց նոր թարգմանութիւններ ընելուն դէմ կը կենան նէ՝ իրենց մէջ թարգմանողներ կան. անանկ հեղինակներ՝ որ իրենց թարգմանութեան հարազատութիւնը առանձին ծանօթութեամբ կապացուցանեն ալ. և ասոնց մէկն է Տ. Ալէր. որուն չափ եբրայական հին լեզուին հմուտ՝ բուն եբրայեցի խ ա խ ա մ ներուն մէջ քիչ կը գտնուին։ Օտարներուն ամենուն ալ հակառակ չեն աշխարհական անձինք ալ սուրբ գիրքը բնագրենէ կամ Լատիներէնէ Գաղղիերէնի կը թարգմանեն և մարդ բան չըսեր։ Միայն թէ թարգմանողը հաւատալեաց՝ և սուրբ գրոց գիտութեան՝ և եկեղեցւոյ աւանդութեան հմուտ ըլլայ։ Սուրբ գրոց իմաստից հարազատ մեկնիչն եկեղեցւոյ աւանդութիւնն է. և ասոր հմուտ չեղող մարդ մը սուրբ գրոց խօսքը կրնայ ծուռ հասկընալ և ծուռ թարգմանել. և ասոր վկայ են սուրբ գրոց բողոքական թարգմանութիւնները։ Լութեր եբրայեցւոց լեզուն գիտէ եղեր՝ և սուրբ գիրքը նոյն լեզուէն Գերմաներէնի թարգմանած է, հիմայ այս թարգմանութեան անհարազատութիւնը ճանչցուած

է. և միայն Գերմաներէն լեզուին մաքրութեանը համար կը կարդացուի։ Աստուածաշունչի շատ տեսակ թարգմանութիւններ կան. ամէնն ալ եբրայական բնագրէ. ամէնն ալ մօտ տարիներս՝ և եբրայական Աստուածաշունչը տպուած ըլլալէն ետքը թարգմանուած. բայց մէջերնին երևելի տարբերութիւններ կան. մէկը եբրայական բնագրին մէկ բառը կերպ մը և միւսը ուրիշ կերպ հասկրցեր է։ Սուրբ գրոց լեզուն հիմայ կենդանի և գործածական լեզու մը չէ՝ որ վէճի տակ ինկած բառին նշանակութիւնը գործածողներէն հասկընանք. ուրիշ տեղ չի մնար հասկնալու, բայց եթէ այն լեզուն գործածական եղած ժամանակը՝ երկու լեզուաց քաջավարժ մարդոց հասկրցածը մեզի առաջնորդ բռնելով։ Եւ այսպիսիներուն հասկրցածն ունիմք եօթանասնից թարգմանութենէն։ Սուրբն Օգոստինոս հետաքրքրական վէճ մը ունեցաւ Լատիներէն Վուլկատա ըսուած թարգմանութեանը հեղինակ սրբոյն Հերոնիմոսի հետ. որուն այս թարգմանութեանս աշխատելուն չէր հաւներ։ Գործը երևան ելաւ՝ և հաւատքի և բարի վարուց դէմ ծուռ իմաստ մը չը գտնուեցաւ մէջը նէ՝ ընդունելի եղաւ։ Նոր թարգմանութիւնն ալ թէ որ այդպէս ըլլայ նէ՝ կընդունուի. և թարգմանողն եկեղեցական կամ Գաթոլիք ըլլայ կամ հրէայ ըլլալը վնաս մը չունենար։ Թէ որ ընդդէմ հաւատոյ բան պարունակէ, թարգմանողը նոյն իսկ Հռոմայ հայրապետն ըլլայ նէ՝ Մոնթոպանի հռոմէական եպիսկոպոսն անոր ընդդէմ կը բողոքէ։

# ՄԷԿ ՔԱՆԻ ԽՕՍՔ

## Մեր Հայաստանի զուռնաչքերանց, աշուղների, երգիչների և հովիւների վերայ։

---

Մեն ազգի հնութիւնը պահպանուել է իւր ժողովրդի ներքին սովորութիւնովն, ժողովրդի ներքին սովորութիւններն են, որք զանազանում են ազգերին միմեանցից, ներքին սովորութիւնը իմանալով մարդս ծանօթանում է ժողովրդի կեանքին ևս. նկարագրելով ազգի ընտանեկան կեանքը և սովորութիւնը, յայտնի տեսնում է նրա միջի աւելորդ պակասութիւնը կամ բարի վարմունքները, ինչպէս Հայաստանի երդիչների խօսքերումն կան չափազանցութիւն և աւելաբաշտութիւն և այլն. ևս կան բարի մաքեր և խրատներ Ազգային ներքին կեանքի վերայ, աշուղներն և երգիչներն աւելի պարզն ներկայացնում, գովելով մեր երկրի հիւրասիրութիւնը ջերմեռանդ Աստուածպաշտութիւնը, ամօթխածութիւնը իգական սեռի, ժողովրդի ճշմարտութիւնը, փոքրերի ծերերին հնազանդութիւնը, որք են միակ պարծանք մեր ազգի։

Ինչպէս տեսնում ենք ազգային հոգին, զգայողութիւնը և միտքը մնացել է աւելի իրան հնութեան մէջ։ Ազգը իրան հնութիւնը պահելով պահում է և ազգութիւնը։ Աւելի լաւ զգացողութիւն և հոգի մենք տեսնում ենք ներկայ Հայաստանի երաժիշտների մէջ. որք աւելի են ներկայացնում մեր հոգուն ազգային հնութիւնը, իրանց զուռնայ, սաղ և շվու ածելովն կամ երգելովն։ Զուռնէն, սազն և երգեցողութիւնը, խաղերը և տաղերը, որք աւելի են յայտնում հին մաքեր կամ նոր տաք զգացողութիւն, սրանց էլ մենք աւելի պէտք է ուշք

դարձնենք, լաւ նկատելու թէ՝ ի՞նչ է ազգային երաժշտութիւնը կամ երգեցողութիւնը ժողովրդի մէջ՝ և ի՞նչ ազդեցութիւն ունի։ Մենք տեսնում ենք ազգային երաժշտութիւնից և երգեցողութիւնից, որ աւելի ենք նկատում մեր հին դարերու ցաւերն և բաղդաւորութիւններն, որք բաց յիշում են մեզ մեր հնութիւնները, ամեն երաժշտութիւն ունի իւրա համար սեփական նշանակութիւն, էնպէս էլ երգեցողութիւնն իրա համար։ Հէմարիտը ասենք շատ լաւ է Հայաստանի երգեցողութիւնը, ժողովուրդը նրանով աւելի է միխիթարվում ուրախութեան և պարապութեան օրերում, բայց ափսոս, որ ամենքը չեն հասկանում խաղերի միտքը և նշանակութիւնը, պատճառն որ երգերի մեծ մասն թուրքերէն է։ և ոչ թէ մեծ մասն հէմարեա թէ բոլորն էլ։ Ժողովուրդը շատ սէր ունի երգերին ականջ անելու, եթէ ամենքը հասկանային նրան կամ թէ չլինէր թուրքերէն, այլ էլել էր հայերէն, էն ժամանակը ժողովուրդը աւելի կյայտնէր իրա սէրը երգերի և զանազան խաղերի վերայ։ Թուրքերէն խաղերն Հայերի մէջ հէմարեա թէ բնական են դառել, էնպէս որ շատերն կարծում են, միևնոյնը չէ կարելի հայերէն երգել։ Թուրքերէն երգերն աչ մատացել է Պարսկաստանի Հայերի մէջ թագաւորութեան ժամանակից, երբ որ Պարսիկներն սկսել են Հայերին շատ չարչարել, Հայերն կամայ ակամայ երգել են թուրքերէն, գովելով իրանց սուրբ հաւատն Պարսիկների առաջին, և էն ժամանակիցն է, որ Հայ երգիչների բերնումն օրէ օր ծաղկել է թուրքերէն երգեցողութիւնը։ Երգիչներն սաղերն և չվուներն կածեն և հետո թուրքերէն կերգեն Հայաստանի մէջ։

Թէպէտ պարտական ենք ամեն երկրի Հայ երգիչների վերայ խօսել մանրամասն, բայց առաջինը՝ որ ծանօթ չենք ամենքի հետ որ ընդհանուրը գրենք, և երկրորդ՝ որ մեր սկզբնաւորութիւնը Հայաստանի հասարակութեան փողահարների և երգիչների վերայ է, սրանք են երկու կերպ զուռնաչի և ա-

չուղ երգիչներ։ Զուռնաչին իրան փողահարութիւնը գործ է ածում բուն Հայաստանի մէջ աշնանային և ձմեռուան ժամանակը հարսանիքի տներումը որ կլինի հինգ օր հինգ գիշեր հինգ օրէն հարսանիքին ասումեն սաչու, որ մեծ ուրախութեամբ են կատարում, հինգ օրից յետոյ բոլոր հրաւիրածներն տալիս են ընծաներ փեսային և հարսին, ձի, էշ, կով, եզն, գոմէշ, խոզ, ոչխար, մեղրաձանձ և զանազան բաներ, որ և վերջանումէ սաչուն, և տեղ տեղ էլ երեք օր երեք գիշեր։ Ինտեղ մեծ խելք պէտք է, որ լաւ նկատի և նկարագրի զուռնաչու փողի հնչիւնից դուրս փչած ուրախութեան և տրտմութեան նշաններն և ձևերն։ Զոր օրինակ, եթէ Հայաստանի գեղերումն հարսանիք սկսումէ ուրբաթ օրն իրիկվայ վեց ժամին, զուռնաչին կանգնումէ կտրի վերայ կամ բակումն սկսումէ ածել իրիկնասահարին, սիրելի ընթերցող դու արի տես թէ մեր Հայ զուռնաչին ինչպէս իրան փողի հնչիւնով յայտնումէ հարսանիքի տան ուրախութիւնը, զդակը յետ թեքած փչումէ դղրդացնելով, եթէ մէկն՝ մէկ ըղալթուն է կպցնում նրա բաց ճակատին, էլ ինչ ասել հարկաւոր է, աւելի է տաքանում իրան ուրախութեան մէջ, էնպէս որ նրա զուռնի ձայնը եթէ մեռելի ականջն հասնի կուրախանայ իրա գերեզմանումն։ Շաբաթ առաւօտն լուսանումէ, առաւօտուայ սհարին ածումեն թէ ոչ յետոյ ուրախ եղանակով, սկսումեն փեսայի տանից գնալ հարսի տուն զուռնայ ածելով՝ ուրախ ուրախ, իբր թէ պատրաստ կացէք գալիս ենք ձեր աղջկան տանենք։ Հարսանց տանը ամեն իրանց սովորութիւնը կատարելուց յետոյ գնումեն եկեղեցին պսակելու, խաչեղբայրն առաջին թուրն կապած նրա յետևից փեսէն յետոյ հարսն ամոթխած քօղով ծածկած, փեսի և հարսի մէջն բռնած ձեռի սղլուխ, որ ոչ ոք չի անցկենայ մէջերն զուռնաչին ածումէ ծանր և հանդարտ կեպով, էնպէս որ կարծես ցոյց է տալիս թէ զգոյշ եկէք ծանր ծանր, որ եօթն խորհուրդից մէկն ձեր գլխին պէտք է կատարուի։ Պսակից

յետոյ դէպ ի հարսանց տուն են գնում սկսում է մեր ճարտար զուռնաչին ածել իրա զուռնէն էն եղանակով, որ բոլոր կորիճ երիտասարդներն խաղաս են լինում, իբր թէ ծանր խորհուրդն աւարտեցին խաղալոյ ժամանակն է, որ և խաղում են մինչև հարսանց տուն: Մթնեցաւ, ժամի հօթն է զուռնաչին հնչեցրուց իրիկնասհարին և ուրախ ուրախ աւարտեց, յետոյ նստում է բուխարու մօտ մէկ մեծ պէծ է գնում չիբուխի վերայ մէկ քանի փստացնում է թէ ոչ, ահա իրիկնահացի հիւրերն տուն են լցվում և նստում են շարքով ամենքը իրանց տեղն, Տէտէրն վերի ծէրին է նստում և սուփրէն օրհնում, յետոյ քեօխվայ քէթխուդէքն, մեր զուռնաչին էլ նըստում է դռան տակին սուփրի ներքի ծէրին, հանում է ճրէլ տոպրակից փոքր փողերն և սկսում է հացի վերայ ածել անուշ եղանակով, էնպէս քաղցր կերպով, որ ամեն մարդու մէկ գառն բաւական չէ ուտելու, քանի զուռնաչին քաղցր ածում է, էնքան քաղցր և համով են հաց ուտում մեր քեօխվայ քէթխուդէքն: Իրիկնահացն աւարտեցին պրծան, ոտի կայնեց զուռնաչին, պատի փողն դրեց ճրէլ տոպրակն, մեծն գոտքիցն հանեց ծուանը կպակի տակից տարքեց և ածաւ հիւրերի դուրս գնալու եղանակը, որ ասում են յարդ, և բոլորն քեփովացած պատէպատ ընկնելով դուրս են գնում հարսանիքի տանից: Միրակի օրն ամեն սովորութիւններն կատարելուց յետոյ, հարսին դուրս են բերում հօրանց տանից, որ տանեն փեսի հետ, դու լաւ ականջ դիր էստեղ սիրելի թէ մեր այ զուռնաչին ինչ կերպ է ածում, երբ որ հարսին իրան ծնողներից և ամեն սիրելի բարեկամներից բաժանում են. հնչեցնում է մէկ ողբերգական եղանակով տա՛րան հա՛ տա՛րան հա՛. էնպէս որ ոչ թէ միայն հայրն և մայրն, քոյրն և ամեն բարեկամներն են լաց լինում, այլ և ամեն ծանօթ և անծանօթ դրացիքն: Զուռնաչու տարան հա՛ ածելու ժամանակը կարծես երկնքի թռչուններն և էն բոլոր թաղի տներն սուգ լինեն հագաց, ամեն նրա դլդլոցն էն բոպէին հարսի ծնողաց

սրտի թելերն են կտրատում, հալում և մաշում։ Ընպէսուն թենով տանում են աղջկան աղի տուն, լուսանում է երկուշաբթէ, թադաւորէք պէտք է անեն կամ թադաւորահրոս, մէկ խնձոր ցցում են բարձր փայտի ծէրումն, հրացաններ գցում, իբր թէ հրոս են անում թադաւոր փեսի համար, հէնց խնձորն վեր են գցում հրացանով թէ ոչ, են ժամանակը էլ բոլորովին ուրիշ եղանակ է ածում մեր զուռնաչին, իբր թէ թադաւորն իրան հրոսն դտաւ, ուրախութենով ածելով մանում են տուն, քահանէն թադը վեր է առնում հարսանիքը վերջանում է և մեր զուռնաչին հանդստանում է։

Շատ կարելի է լուսաւոր երկիրներից շատերն առասպել կարծեն էս բաներն, և ասեն Այաստանի զուռնաչիքն խաղեր չունին, ի՞նչպէս կարող են իրանց փողահարութենով մարդու հոգուն երևակայացնել ուրախութիւն կամ տրտմութիւն, անշուշտ կսխալուին չարաչար, թէպէտ խաղեր չունին, բայց ոչինչ ժամանակ չեն կորցնել իրանց եղանակների կարդը ածելու ժամանակ, և առանց խաղերի անթիւ եղանակներ կարող են հնչեցնել առանց փորձառութեան։

Այժմ սկսենք մեր Այաստանի աշուղների վերայ մէկ քանի խօսք խօսալ և երգիչների վերայ. աշուղներն և երգիչներն Այաստանի ամեն գիւղերում էլ կան, որ տեղ կ կամ երկու որ տեղ շատ, ինչպէս վաղ ժամանակներում ամեն տեղեր Այ քարոզիչներն շատ էին այժմ էլ աշուղներն են շատ որք տարաբաղդաբար քնարահարութեան ժամանակը երգում են քոլորն թուրքերէն, որք են բայց թիք չորս շարքից վերջաւորութիւն մէկ տուն, կամ թէ չորս տանից մէկ բանի վերայ ողբերգութիւն, որին կասեն մէկ գունով գուրս բերած։ Դուս առաւել խաղեր, Ռեօռօղլի, Ռէշիշօղլի, Աշղարիպին և Ռեարամին։ Էս չորսն էլել են քնարահար երգիչներ շատ երևելի, որոց երգերն մինչև մեր օրն Այաստանցիք երգում են շատ գարեր և տարիներ. սրանցից երկուսն էլել են Այեր Աշղարիպն և Ռէշիշօղլին, սրանց երգեցողութիւնն էլ է

եղել տաճկերէն։ Բ. Հելորդ հոմարեցինք սրանց երգերից քանիմի օրինակներ գրել էստեղ, պատճառ որ շատերին յայտնի է Աշղղարիպի, Վեհշեշողլու և ուրիշ երգիչների օրինակներն։ Այժմ ահա հասարակ Հայոց երգիչներն երգում են համարեա թէ բոլորն թուրքերէն, թէպէտ և ներկայ դարում երևեցան մէկ քանի հայասէր երգիչներ, ինչպէս են Սայեաթնովն, Հիրինը, Աղբար-Աղամը և Սէապն, էնքան մեծ բան չէ որ հոգս մարդով ընդհանուր Աղգը պարծենայ, թէ ունինք Հայ երգիչներ, ինչպէս տաճկերէն կասեն մէկ ծաղիկով գարունք չի լինիլ, էնպէս էլ հոգս մարդով Աղգային երգեցողութիւն առաջ չի գնալ, մինչև որ ամեն երգիչ հայերէն չլինի երգում։

Եւրոպացիք ունին իրանց համար գանազան ոգեւորութիւն և նրանց համար շատ տեսակ գործիքներ քնարներ, սանթուր և փողեր, էնպէս էլ մեր Հայ աշուղների գործիքն են սազերն և քամանչէքն, սանթուրների տեղ քանի մի տեսակ շվուներ։

Աշուղներն առաջ կոկսեն իրանց սազերն ծնկծնկալէ քաշել ուղղել հինգ բուպէումն, յետոյ հնչեցնել ինչ և իցէ մէկ եղանակ, գիմացի նստած ընկերն երգում է քաղցր ու բարակ ձէնով, էնպէս որ կարծես սազի և երգողի ձայնը մէկ լինին, լողի գուրն շարժում է և սկսում է երգողի համեմատ ուրախանալ կամ տրտմիլ, երգիչն իրան առնածի գորութիւնից տաքանում է և գոյնը փոխում, էնպէս որ կարծես Աշղղարիպն կամ Վեհարանն լինի կենդանի, կարող եմ համարձակ ասել, որ էնպէս են շարժվում և գունափոխվում, ոչ պակաս քան Տիխոն թատրոնի Խաղացող խաղողները։ Էս կերպ աշուղների մեծ մասն կոյրեր են, որք սազերն ձեռներին կամ գոշներին կապած գիւղից գիւղ մանն են գալիս աղքատի պէս իրանց համար ապրուստ գտնելու, կոյր աշուղների դլխաւոր առարկան լինում է գովասանութիւն Հայոց հնութեան վերայ, սկսում են գովել ճշմարիտ սրտով, մինչև լսողն գուրն շարժվում է, ոգորմութիւն է հասցնում կոյր երգչին, շատ

անգամ Հայոց անուսում լինելն, նախանձ և անմիաբանութիւնն են երգում։ Թէպէտ Հայ երգիչների միտքն բարի է, բայց ինչ օգուտ, որ բոլոր ասածներն լինում է տաճկերէն, ափսոս հազար ափսոս, եթէ լիներ Հայ լեզուով գիտեմ ինչ օգուտ կբերէր մեզ։

Հայաստանի երգիչներն շատ անգամ հակաճառում են միմեանց հետ հանելուկների համար, ժողովուրդն մօտ է լինում մէկ տեղ և երկու աշուղ երգիչների կանգնացնում մէջ-ներումն, նրանք սկսում են մէկս մէկու հանելուկ ասել, հետն էլ սաղերն ածել, որն շուտ է գտնում միւսի ասածն և կապում է հանելուկով նրան, նա է յաղթող գտնվում ժողովրդի առաջ, սա էլ է շինում երգելով, հանելուկներն միևնոյն ամեն երգերի նման լինում են թուրքերէն։

Այս կերպ երգիչների կարդումն են և հովիւներն, որ իրանց բարակ փայտից շինած շվուն սուլում են զանազան քաղցր եղանակներ, զոր օրինակ ոչխարաձև, ոչխար տուն անելունը շան կանչելունը, որ գնայ իրան յետևիցը հօտն պահպանի գայլերից. բայաթու և զանազան երգերի ձևեր էլ դիտեն, այս ձևերիցն ամենից քաղցրագոյներն են ոչխարաձևը և շան կանչելունը։ Ինչպէս հիմայ կասեն յՕձուն գիւղումն, թէ մէկը Գուրգէն անունով, որ այժմ էլ կենդանի է, իրան ոչխարածութեան ժամանակը մէկ ամպած օր իրան ոչխարի հօտն արածելիս հինգ վերստ հեռաւորութեամբ յՕձունից, գայլն ընկել է իրան հօտի մէջ, շուտով բերանն է առել շվուն և փչել իրան շան անունը և կանչել շուտով ա թօփլա՛ն ա թօփլա՛ն հա՛ հա՛ հը՞, նրա թօփլան շունը իսկոյն իրան սիրելի տիրոջ շվի ձայնը ճանաչելով, հինգ բոպէումն հինգ վերստը գնացել է թռչունի պէս և հասցրել է իրան տիրոջն օգնութիւն, էնպէս որ գայանը մէկ ոչխարի դմակ հաղիւ է կարդանում վերաւորել։

Հայաստանի հովիւներն ամառուայ օրերում սարերի գլուխին կանաչ խոտերի վերայ, հոտալեց ծաղիկների մէջ գչգո-

չան աղբիւրների ղբաղին նստած, վերիւռի հով քամին փը-
չում է սլվլալէ, ծառերն զանթափոս ծաղկի ղլխին կանգնած
ծլվլացնելով Աստուծոյ տուած բարիքների վերայ ուրախա-
նում են, հովիւը հանում է իրան յեռեւի փեշից պղնձէ կօլօլ
թասն և մէկ սաջով թխած հաց կթում է քէշլեն ոչխարնե-
րից կաթն թասի մէջ մէկ հացն է կծում մէկ կաթն խփրշ-
տում, մինչև բոլորն անուշ է անում, օտար տեսնողին էս բա-
ներն երևում են ինչպէս Եւրոպիոյ մէկ հռչակաւոր տեսա-
բան։ Յետոյ խմելով մօտի սառն աղբիւրից, որ կանանչ ծա-
ղիկների միջից գետինը պատռել դուրս է փաղում, չորացած
սիրտ է ուզում որ ինքն հովացնի։ Ստուումեն երկու ոչխա-
բածներն սառն աղբիւրի մօտ, իրանց հօտն, չորս կողմերու�
արածումեն բզզալէ փուշտալէ, մկկալէ և կլաւելով, մէկն վեր
է առնում շվուն ձեռն-ածում ո՛հ ինչպէս է ածում սիրելի
ընթերցող, էնպէս որ էն շվի համեղ ձայնից կարծես անբան
ոչխարներն բանականութիւն են ստանում և քաղցր արածում
կամ ցրուած ժամանակը էնպէս հնչեցնում է, որ բոլոր ոչ-
խարներն մօտ են լինում իրանց տիրոջ մօտ։ Ակսումէ եղա-
նակը փոխել և ածել բայաթու կերպ՝ բարակ ու երկար փը-
չելով շվուն, իրան ընկերն երգում է բայաթի, ինչ քարացած
սիրտ կլինի, որ նրանց երգերն լսի և չզղայ իրան սրտի մէջ
ուրախութիւն կամ տրտմութիւն, մէկի սուլելն միւսի երգերն
հեռու անցկենող ճանապարհորդին էնպէս է թուում ինչպէս
մէկ մարդից բղխած, եթէ չմոիկ տայ մօտից մէկի մատներին
միւսի պռոշներին։ Ամեն Հայ երիտասարդ եթէ տեսնի Օձ-
նայ փողահար Ղաչինին և երգիչ Մացոյին, շատ կհաւանի
նրանց, իրանց հովվութեան և երկրագործութեան մէջ եթէ
ունին Հայ երաժիշտներ և երգիչներ, էնքան ընդունակու-
թիւն և շարժողութիւն, շատ բաւականին շնորհք է, որ ա-
ռանց ուսման և փարժապետի կարողանում են իրանց Ազգա-
յին հնութիւններն և աւանդութիւններն պահպանել, բայց
ափսոս, էստեղ մէկ գլխաւոր բան է պակաս, արդեօք ի՞նչ է

էս մեր խնդիրը,—լեզու՝ ազգային լեզու, Հայոց լեզու Հայ երգիչների բերանում, որ միս անդամ օտար լեզուով չերգեն, այլ բոլորն լենի մայրենի լեզուով, որ մեր խեղճ ազգին փոքր օգուտ չէ: Ինչպես երգիչներն օտար լեզուով են երգում, էնպես էլ շատ տեղեր պատաւ կանայք Տաճկաց բայեաթներով են դովում իրանց մեռելն և սուգ անում, աւելորդ չեմ համարում ասել, որ Ա. Աստուածնցի Հայ կանայք իրանց ենջեցեալի վերայ շատ տեղ վրացերէն են լաց լենում, էնպես որ սասսիկ զարմանալու բան է: Թիֆլիզու Հայ հասարակութիւնը ուշադրութիւն չէ դարձնում ազգային երաժշտութեան և երգեցողութեան վերայ, եթէ մէկ տատն պատուելի մարդիկ նրա տած ուրախութիւն լենին անում, մէկն միւսին կլենգրի, որ վրացերէն մուխամբաշ ասի, և լաւ բաց ախանջներով կլսեն վրացերէն երգը, հայերէնի անունը չեն տալ պատճառ՝ իմացող չկայ մէջներն, եթէ լենի էլ պատիւ չունի, թէպէտ ուսումնական մարդիկ տեղ տեղ դորձ են ածում, էն էլ էնքան մեծ բան չէ, բանը հասարակութիւնից է կախուած, ուսումն երաժշտութիւնը և երգեցողութիւնը ազգային լեզուով, պէտք է ժողովուրդն հաճի իմանայ, կին դնէ՝ և էնպէս առնէ:

Համազասպ Տ. Խարսեղեան Աբովեանց
Օձնեցի:

---

Տարեմուտի անպարտութիւնը 4-ը տեսրում,

Եր. 224 տող 2, կարդա 455: տող 12—455 թ: տող 17—58 և 59: տող 22—830 թ: տող 30—885 թ: տող 31—1835 թ: եր. 227 տող 17—500: տող 21—500:

---

Հրատարակիչ Ստեփանոս աւագ քահանայ Մանդինեանց:

---

Дозволено цензурою. Тифлисъ 15-го Іюля 1866. г.

Ի Տպարանի Գլխաւոր Կառավարութեան
Փոխարքային Կովկասու:

1) «Գարուն», ամսագիրն դուրս գալով ամիսը մի անգամ կպարունակէ իւր մէջ հոգևորական առարկայք՝ պատմութիւն քրիստոնէութեան և Եկեղեցւոյ, ճառեր և քարոզներ։

2) Օմաններ, զրոյցներ, համառօտ նկարագրութիւնք, տեղագրութիւնք, դրամէք և ոտանաւորներ։

3) Տեսութիւն մատենագրութեան։ Սրան կվերաբերի կրիտիքական քննութիւն հայերէն տպած գրքերի, և պէտագոգիկական յօդուածներ։

4) Տնական տարեգրութիւն—ներքին կեցութիւն Հայոց, և Ֆիլիսոն։

Յանկացողք ստանալ այս ամսագիրը կարող են դիմել հրատարակողին — Въ Редакцію Армянскаго журнала „ВЕСНА“ въ Тифлисѣ, въ домѣ Протоіерея Манденянцъ.

Ամսագիրը կբաղկանայ չորս կամենդարնի թերթից, այն է 64 երեսից, և 12 տետրակների գինն է 6 մանէթ՝ թէ Թիֆլիզում և թէ ուրիշ քաղաքներ ուղարկելով։